№ 182 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

№ 182 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23

Յուլիսի 1-ից

ԲԱՑՎԱԾ Է ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ „ՊՕՂՈՍԵԱՆՆԵՐԻ“

Արմենակի-բազար տուն Զուժուխաձէի 2-րդ յարկ

Վաճառվում են ամեն տեսակ մանուֆակտուրային ապրանքներ մեծ քանակութեամբ և թողով շատ մատչելի գներով.

առ. 2· Ն· 3—20

ԱԶԳ

Մար.-Յովնանեան or. ուսումնարանի

ՏԵՍՈՒՉԸ

խնդրում է այն բոլոր անձանց, որոնք այդ ուսումնարանում ուսուցչութիւն առնելու խնդիրք են տուած—բարեհաճեն ԱՅՍՕՐ ցերեկվայ ժամի 1—2 գալ ուսումնարան հետեւանքները իմանալու համար։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինքնապաշտպանութեան խնդիրը. Վերջին տեղեկութիւններ. Բողոքներ. Մամուլ. Պաշտօնական. Հայոց եկեղեցապատկան հողերի վիճակը ապագայում. Պատասխան շրջանեռում. Սոսլիպինի անհատական կարծիքը. Ինքնապաշտպանութեան գործը. Նամակ Պետերբուրգից. Մի պատմ. Ի. Ս. Անանովի կոակը. Նամակներ Խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքսական հայ գաղթականները. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

XI

Ինքնապաշտպանութեան գործը նոր բարդ և մեծ գործ էր, որ պէտք էր կազմակերպել։

Երբ Բագւում անցեալ տարի փետրվար ամսին բռնկվեց Թուրքական ամբոխի և վայրենի գրոհը, հայերը յանկարծակիի եկան. նրանք երբէք չէին մտածել ինքնապաշտպանութեան մասին։ Դաշնակցութիւնը պատրաստութիւններ չուներ այդպիսի նոր կոչման ծառայելու համար։

Բագւում գտնված սակաւաթիւ երիտասարդ մարդիկ, որոնք եղել էին առաջ զինուորական ծառայութեան մէջ, կամ պատրաստվել էին զինուորութեան թիւրքական դատի համար, և ուրիշ կամաւորներ փորձեցին Բագուի կոտորածի երրորդ օրը փողոցներ դուրս գալ և դիրքեր բռնել։ Զր նայելով իրանց փոքր թիւին, նրանք իրանց դիմադրութեամբ զգաստացրին և զսպեցին Թուրքերին։

Բագուի այդ կարճատև և ուշացած դիմադրութիւնը իր թէև սահմանափակ, բայց դրական արդիւնքներով կենսական դարձրին ինքնապաշտպանութեան գաղափարը, որը մինչև այդ երբէք լուրջ քննութեան առարկայ չէր եղել։ Առաջին անգամ նպատակայարմար դատվեց կամաւորներ հրաւիրել դէպի Բագու ուրիշ տեղերից՝ Թիֆլիսից, Շիրակից և ուրիշ շրջաններից։ Կամաւորների թիւը այնուամենայնիւ սահմանափակ դուրս եկաւ։

XII

Բագուի դէպքը մոռացվելու վրա էր, երբ ընդարում բռնկվեց Երևանում։ Այդտեղ հայ երիտասարդ մարդիկ աւելի պատրաստ գտնվեցին և կարողացան անմիջական դիմադրութիւն ցոյց տալ և պատժել յարձակվողներին։ Դա միջանկեալ և սահմանափակ մի դէպք էր։

Ցանկարծ մայիս ամսին սարսափներ սկսվեցին Նախիջևան քաղաքում և գաւառում։ Այդտեղ, ինչպէս և Բագւում, հայերը յանկարծակիի եկած կորցրին իրանց գլուխը։ Նրանք ոչ մի դիմադրութիւն ցոյց չը տուին Թուրքերին, տուին սարսափելի զոհեր ու կորցրին մեծ հարստութիւններ։

Որքան յորդոր ու աշխատանք գործ դրվեց Շիրակից, Ծաղկաձորից, Նոր-Բայազէտից, Երևանից զինուորներ և կամաւորներ շուտափոյթ ուղարկելու ազէտի դաշտը, ոչինչ չը դուրս եկաւ, իսկ ադեղը ընդարձակվեց և կլանեց Շարուրի ապաբակէ հայ գիւղերը։ Զինուորների և կամաւորների թիւը շատ քիչ էր ուժեղ դիմադրութիւն կազմակերպելու համար։

Բայց Նախիջևանի դէպքը զօրաւոր դրդիչ հանդիսացաւ ինքնապաշտպանութեան գործին ընթացք տալու մեծ ծաւալով հայկական գիւղերում։

XIII

Պարզ էր, որ դաշնակցական զինուորների փոքր կազմով անկարելի էր մասակարարել ստուար զօրախմբեր երկրի թուրքերից։ Պարզ էր, որ ժողովուրդը ինքը պէտք է իր մասնակցութեամբ մեծացներ դիմադրական ոյժը յարձակումների դէմ։

Ժողովուրդը հասկանում էր իր մասնակցութեան անհրաժեշտութիւնը։

Նա հասկանում էր և կարիք էր զգում ղեկավարութեան։

Արդարև, ժողովուրդը տեսնում էր, որ նա կոտորվում է, թալանվում և աւերվում, իսկ տեղական վարչութիւնը և պետական զօրքը անկարող էին նրան պաշտպանել։ Մնում էր կամ վիզը ծռել հարուածների առաջ կամ, յուսահատական կռիւ մղելով, փորձել պաշտպանելու իրան։

Ահա այդ տրամադրութիւնը, կեանքի պայմանների այդ սարսղոգական պահանջը նպաստաւոր հող էին պատրաստել ժողովրդական զօրքեր կազմակերպելու համար։ Թուրքական յարձակումներին փոքր ի շատէ լուրջ կերպով դիմադրելու նպատակով։

Ինքնապաշտպանութիւնը այսպէս կամ այնպէս պէտք է իրագործութիւն ունենար։ Բայց բոլորի ցանկութիւնն էր նրան տեսնել կազմակերպված լաւ, խելացի հիմքերի վրա։

XIV

Ժողովուրդը հաճութեամբ ընդունում էր ամեն մի խորհուրդ, ամեն մի ցուցում։ Որքան էլ ծանր լինէին նրա համար նշանակված տուրքերը, ծախքերը և աշխատանքները, նա վերցնում էր բոլորը իր վրա։ Անհրաժեշտութեան գաղափարին աւելացել էին մասսայական ոգևորութիւնը և անձնուիրութեան պատրաստականութիւնը։

Եւ ահա այդ պատճառով մենք տեսնում ենք, թէ ինչպէս կարճ միջոցում ամբողջ գաւառներ ամենաեռանդուն և ջերմ կերպով նուիրվում են ինքնապաշտպանութեան գործին, ձեռք են բերում զէնք ու ռազմամթերք, վարժվում են զէնք գործածելու արհեստի մէջ և ամենայն պատրաստականութեամբ յանձն են առնում գիւղական պահպանների և մարտիկների պաշտօն վերցնել իրանց վրա։

Ղեկավարողների գործը, որքան էլ դժուար լինէր, բայց մի բանով նա լաւ էր, որ կար ժողովրդական նպաստաւոր տրամադրութիւն ընդարձակ գործունէութեան համար։

Եւ շնորհիւ այդ հանգամանքի կարելի եղաւ կարճ միջոցում կազմակերպել ոյժ, որը առաջ տարիների ընթացքում չէր աշողվում ձեռք բերել։

XV

Սակայն գործի կազմակերպութեան ժամանակ ընդհարվեցին երկու սկզբունքներ, կամ աւելի ճիշտն ասած գործունէութեան երկու եղանակներ, երկու մեթոդներ։ Դաշնակցական ղեկավարները ըստ իրանց աւանդութեան ամեն բան կազմակերպում էին այնպէս, ինչպէս նրանք մինչև այդ արել էին հայդուկային խմբեր կազմելու միջոցին։ Իսկ ժողովուրդը ձգտում էր չը զատել ինքնապաշտպանութիւնը իր սովորական կեանքից, մտցնել նրան առօրեայ իր կարիքը հոգսերի շարքի մէջ, մի խօսքով կապել նրան կեանքի հետ սերտ կերպով, տալով իրան, ժողովրդին, կատարեալ հնարաւորութիւն մասնակցել կազմակերպական գործին, վերահսկող լինել ամեն բանի վրա, իբրև հասարակութիւն, իբրև լիազօր տէր։

Դա ժողովրդական ինքնապաշտպանութեան այն ըմբռնումն էր, որը քանի գնում աւելի ու աւելի հակակրութիւն է գտնում հասարակութեան խաւերի մէջ։

Ինքնապաշտպանութիւնը ժողովրդի անմիջական հսկողութեան տակ—ահա այն, ինչին ձգտում էր ժողովուրդը։

Ա. Բալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Էջմիածին, 31 օգոստոսի

Երեք օրվայ հակաճառութիւններից յետոյ ժողովը, 53 պատգամաւորների մասնակցութեամբ, երէկ, երեկոյեան ժամի 9-ին, 45 ձայների մեծամասնութեամբ ընդունեց հետեւեալ բանաձևը.

«Ի նկատի առնելով, որ ամեն մի ազգ անձեռնմխելի իրաւունք ունի լինել իր գործերի տէր, որ հայ ժողովուրդը երբ-կար ժամանակ մարտնչել է, արիւնահեղ կռիւ է մղել իր այդ իրաւունքի համար, որ ռուսահայերի ճակատագիրը սերտ կերպով շաղկապված է Ռուսաստանի ազատագրական շարժման հետ, որի ալիքները նոր զարկ տուեցին ժողովրդական ինքնաճանաչութեանը հեռացնելու ներքին և արտաքին ճնշումները, որ կաթողիկոսի վերջին կոնդակները և ներկայ պատգամաւորական ժողովը ամբողջապէս արդիւնք են վերոյիշեալ գործօնների, ժողովրդի հրամայողական պահանջների և հասունացած կարիքների, ժողովը գտնում է, որ ինքը, որպէս ընտրեալ ներկայ պայմաններում օրինաւոր ժողովրդական ներկայացուցչութիւն, պարտաւոր է բաւարարութիւն տալ իրան ընտրող ժողովրդի պահանջներին, իբրև իսկական տէր և տնօրէն՝ լուծել հայոց եկեղեցու հետ կապված բոլոր գաղրոցական, ադմինիստրատիվ, տնտեսական, կալուածական և այլ սոցիալական ընտաւորութիւն ունեցող հարցերը։

«Մինչդոյն ժամանակ ժողովը իրան վերապահում է իրաւունք իր կարծիքը արտայայտել նաև այն բոլոր հրատապ հարցերի մասին, որոնք ալեկոծում են ամբողջ Ռուսաստանը, մանաւանդ արիւնաքամ եղող մեր հայրենի Կովկասը»։

Հ. Առաքելեան

—

Երէկ մենք տեղեկութիւն ստացանք Մեղրու մասից, որ շրջակայ թուրք գիւղերի բնակիչները հաւաքվել են Ալիդարա գիւղը՝ Ագրիլ-Սամադ-բէգի մօտ։ Պարսկաստանից 400 հոգի զինված թուրքեր օրը ցերեկով անցել են Արաքսից և միացել ալիդարացիների հետ։ Նրանց առաջնորդում են երեք խաներ։ Սահմանապահ զինուորները անկարող են եղել դիմադրել այդ ոյժին։

Ցիշեալ 400 հոգին, միացած տեղացիների հետ, բաժանվել են երեք խմբի և նպատակ են դրել ջնջել ու ոչնչացնել տեղական հայերին։

Այդտեղ է եկել տեղական պրիստաւը, բայց, չը նայելով իր ջանքերին, նա ևս անկարող է զսպել թուրքերին։

Եկէք թուրքերը բանակցութիւններ են սկսել Նիւղդի գիւղի թուրք բէգերի հետ համերաշխ գործելու համար։

Թուրքերը միացած այժերով գրոհ են տուել Հանդ գիւղի վրա և յետ են նահանջել դիմադրութեան հանդիպելով։

Հայերն էլ յարձակվել են Բիթնաղուզ գիւղի վրա։

—

Տանակերտ, 15 օգոստոսի

Շրջանում դրութիւնը աւելի լարվեց։

Ամսիս 13-ին անայտ չարագործների ձեռքով Դսար և Տանակերտ գիւղերի արանքում գտնվող «Սալ» կոչվող հողում սպանված են երեք ջուր կպող դաստակցի թուրքեր։ Միւս օրը գաւառապետի պ. օգնականը շրջանի պ. պրիստաւի հետ եկել էին դէպքի վայրը։ Թէև սպանութեան տեղը Տանակերտի սահմաններից դուրս է, բայց մեղադրվում են դարձեալ տանակերտցիք։

Նոյն օրը Ագուլիսում սպանված է մի թուրք, որին, ինչպէս պատմում են, իրանք թուրքերն են տերորի ենթարկել հայերի հետ յարաբերութիւն ունենալու և միրգ վաճառելու պատճառով։

Ուրբաթ օրն է, որ Ագուլիսի շուկայի թուրքերի խանութները փակ են։ Խանութների նոյն իսկ դատարկ արկղերն էլ նրանք կրում են իրանց թաղը։ Կարծվում է, որ նրանք պատրաստվում են յարձակվելու։ Դրսից թուրքերը ոչինչ չեն բերում վաճառելու։ Մթերքների գինը զգալի կերպով բարձրացել է։

Արիւնալի ընդհարումներն անխուսափելի են։

Հայկ

—

Զանգեզուրի գաւառում դրութիւնը գնալով աւելի կրիտիկական է դառնում։ Հայ-թուրքական ընդհարումները սկսում են մուտք գործել այնպիսի մասերում, ուր հայ և թուրք ազգաբնակութիւնը աւելի է սերտ կերպով կապված իրար հետ։

Շուշու վերջին ընդհարումից յետոյ զինված թուրք աւազակախմբերը տեղափոխեցին իրանց գործունէութեան ասպարէզը Զանգեզուրի գաւառը. իսկ հետևանքը եղաւ այն, որ ոչնչացան մի քանի հայ ու թուրք գիւղեր, ընկան տասնեակ անմեղ զոհեր, իսկ գոյքը բաց է անում իր ճիրանները՝ գոլամահ անելու վերջին ծայր դժբաղդութեան հասած ազգաբնակութիւնը։

Մինչև այժմ Զանգեզուրի գաւառը գերծ էր թշնամական բացարձակ արարքներից. գունդ 3-րդ, 4-րդ և 5-րդ գաւառամասերում եղբայրասպան ջարդերի ուրուականը չէր սպառնում, սակայն վերջին մի քանի դէպքերը, մանր դողոթիւնները ու աւազակային յարձակումները պատճառ եղան ընդհարումների։ Մեր ստացած վերջին տեղեկութիւնները թէ Գօրիսից, թէ Օրդուբաթից և թէ Մեղրուց ցոյց են տալիս, որ այդ ընդհարումները եղել են աւելի կատաղի, կատարվել են աւելի վայրենաբար քան ուրիշ տեղերում. մանաւանդ որ ընդհարումների հեղինակները միայն տեղացիները չեն։

Մեր ստացած մի մասնաւոր նամակ հաղորդում է, օրինակ, որ Պարսկաստանից բացարձակ կերպով անցել են սահմանը բազմաթիւ թուրքեր, որոնք, զանազան խմբերի բաժանված, յարձակվում են հայ գիւղերի վրա բնաջինջ անելու նպատակով։

Այդ խմբերից մէկը, օգոստոսի 11-ին, միացած տեղական թուրք ազգաբնակութեան հետ յարձակվել է Զաթար գիւղի վրա, ուր ընդհարումների ժամանակ անխղճօրէն սպանել է պետական ատիճանաւորին՝ Մեղրու մասի անմանաբոյժին։ Գօրիսից ստացված մի այլ մասնաւոր հեռագիր հաղորդում է, որ թուրքերը թալանել ու հրդեհել են Ղարաբաբա գիւղը, որտեղի ազգաբնակութիւնը այժմ գտնվում է սարսափի վիճակում և հացի մեծ կարօտութիւն է զգում։ Ի հարկէ թուրքերի դրութիւնը հայերի դրութիւնից աւելի վատթար է. խորը վնասներ են ստացել նրանք ևս, մանաւանդ որ նրանց վրա ծանրանում են տեղական ու պարսկական խառը աւազակախմբերը, որոնք հաւասարապէս պատուհաս են երկու կողմի համար էլ։

—

Ջերբայիլի գաւառի Վանք գիւղից հաղորդում են «Кавказъ»-ին.

Մօտ օրերս այստեղ բոլորովին պատահաբար մի խոշոր ընդհարում տեղի ունեցաւ Կարեգաղնի գաւառի (Ջերբայիլի) Կօզլուչայի բնակիչների և մուսուլմանների միջև։

Այդ ընդհարումի հանգամանքները հետևեալներն են. Վլադիմիր Գօրգենբերգ անունով մի մարդ, Հաղրութից 4 վերստ հեռաւորութեան վրա հայերի հողում յարդ էր հաւաքում ներքնակի համար։ Դեռ ևս կէսօրից առաջ նա մրատնում է մի հայի այգի և սկսում է մրգ քաղել, բայց նկատվելով այգեպահի կողմից, անցնում է միւսը, այնտեղից էլ երրորդ այգին։

Վերջինի մէջ նա նկատում է 8—10 հոգի զինված թուրքեր, որոնք պահ էին մտել շերամապահական տան մէջ, իսկ նրանցից ոչ հեռու երկու թուրքեր նոյնպէս, որոնք զինված էին եռագծեան նոր բաձև հրացաններով։

Տեսնելով թուրքերին, Գօրգենբերգը ուզում է փախչել, սակայն նրանցից երկուսը կանգնեցնում են նրան, բայց յետոյ դարձեալ բաց են թողնում։

Գօրգենբերգը, Վանք վերադառնալով, յայտնում է այդ թուրքերի մասին Խուբով Առաքելեանին, Միկիչ Օվանէսեանին և ուրիշներին. միւսոյն ժամանակ հաղորդում է և աւագ Վասիլսար Կուզնեցուին, որոնց հետ միասին իսկոյն գնում են այն այգին, որտեղ թաքնված էին զինված թուրքերը։ Դեռ չը հասած այգին, ցանկապատի մօտ նրանք տեսան երկու թուրքի, որոնք, նկատելով իրանց դէմ եկող բազմաթիւ զինված մարդկանց, այս ու այն կողմ ցրվեցին։ Այգու մէջ գտնվող թուրքերի մի մասը փախաւ դէպի գետակը և անյայտացաւ։ Դրանց ետևից երևացին հեծեալ և հետևակ հայերը, որոնք շտապում էին դէպի գետակը և պօտի ճանապարհի վրա գտնվող այգիները։

Հայերը հէնց որ մօտեցան ալգիներին, ներսից սկսեցին կրակել նրանց վրա, որին հայերը նոյնպէս պատասխանեցին։ Այդ միջոցին հայերի մի մասը մօտեցաւ Ղարագաղու գիւղին և սկսեց գնդակահարութեան ենթարկել գիւղը, իսկ միւս մասը կրակում էր դէպի այգին։

Բարեբաղդաբար, կարճ ժամանակից յետոյ, դէպքի տեղը եկաւ պրիստաւ Դաւիթովը, որը առաջարկեց հայերին իսկոյն դադարեցնել գնդակոծութիւնը։ Հայերը հնազանդվեցին նրան և թողեցին իրանց դիրքերը։

Գնդակոծութեան ժամանակ այգիներում գտնվել է սպանված՝ չորս գնդալի հարուածներով՝ Ղարագաղու գիւղի բնակիչ Սուլէյման Մամիշ-օղլին։

—

Պետերբուրգ, 21 օգոստոսի

Ինչպէս հաղորդվեց լրագիրներում, երէկ երեկոյեան մինիստրների խորհրդի սովորական նիստի մօտից անկեկալ անցայտացել է Նրան բերող կառապանը, սանելով իր հետ մինիստրների անունով գրված ծրարներով և շատ կարևոր արձանագրութիւններով լի պայուսակներ. կառապանի անունը յայտնի է, բայց մինչև այժմ չէ գտնված։

(Հեռ. Գործ.)

—

Նիժնի-Նովգորոդ, 21 օգոստոսի

Մուսուլմանական համագումարում ցանկալի է համարված ներքին գործերի մինիստրության մէջ հիմնել յատուկ բարձր հոգևոր կոչումի մի մարդու պաշտօն՝ մուսուլմանների շահերի պաշտպանութեան համար և Թագաւոր Կայսրին զեկուցանելու իրաւունքով։ Ընտրված է կենտրոնական կոմիտէ 15 հոգուց։ Համագումարը փակվեց։

(Հեռ. Գործ.)

—

Գանձակ, 21 օգոստոսի

Զանգեզուրի գաւառում անկարգութիւնները շարունակվում են։ Գիսխանի հետ հաղորդակցութիւնը դժուարին է։

(Հեռ. Գործ.)

—

Պետերբուրգ, 21 օգոստոսի

Պարզվեց, որ կառապանը երէկ տարել է մինիստրների խորհրդի սուրհանդակի պայուսակները առանց չար մտքի։ Թղթերը ամբողջովին գտնված են։

(Հեռ. Գործ.)

ԲՈՂՈՔՆԵՐ

Էջմիածի կենտր. ժողովից հեռացած պատգամաւորների

I

Էջմիածին, 21 օգոստոսի

Մենք՝ ներքոյ ստորագրեալ պատգամաւորներս՝ հիմնվելով ժողովին ներկայացրած և արձանագրված մեր բացատրութիւնների վրա, այլ և ի նկատի առնելով, որ ամսիս 20-ին երեկոյեան նիստում ընդունված բանաձևը ժողովի իրաւասութեան համար գծում է աւելի ընդարձակ սահմաններ, քան նախատեսված էր ընտրող ժողովրդի կողմից, և որովհետև ժողովի այսուհետև կազմելիք որոշումները, բնականաբար, պէտք է հիմնված լինեն ընդունված բանաձևի վրա, մենք լիազօր չենք գտնում մեզ մասնակցելու նիստերին և ներկայ հանգամանքները ի նկատի ունենալով ազարդին ենք համարում ժողովի ապագայ գործունէութիւնը։ Ցայտնում ենք նաև, որ վերապահում ենք իրաւունք պատճառաբանված բացատրութիւն տալու մեզ ընտրողներին։

Պատգամաւորներ՝ Սամսոն Յարութիւնեանց—Կարսի, Գէորգ սարկաւագ Զորեքչեան—Նոր-Նախիջևանի, Համբարձում Առաքելեան—Նուխի քաղաքի և գաւառի, Իսահակ վարդապետ Տէր-Միքայէլեան—Նուխի քաղաքի և գաւառի։

II

Էջմիածին, 22 օգոստոսի

Հրաժարվում եմ Կենտրոնական Ժողովում պատգամաւոր լինելուց և միանում եմ պատգամաւորներ Սամսոն Յարութիւնեանին և միւսներին։

Զանգեզուրի պատգամաւոր՝
Մատթէոս Տէր-Գրիգորեան

III

Էջմիածին, 21 օգոստոսի

Ի նկատի առնելով, որ Ռուսաստանի մեծ յեղափոխութեան ներկայ մոմենտը դարձնում է անհրաժեշտ պահանջ բոլոր յեղափոխական ոյժերի կենտրոնացումը յեղափոխական ընդհանուր հարուածի համար, որ պրոլետարիատի և աշխատաւոր գիւղացիութեան անմիջական շահերը պահանջում են կենտրոնացնել իրանց ոյժերը յեղափոխական ընդհանուր թափով տապալելու բիւրոկրատական շղթաները, ստեղծելու ազատ պայմաններ, մղելու ազատ դասակարգային կռիւ, որ էջմիածնի ներկայ այսպէս կոչված «Կենտրոնական» ժողովը ընդհակառակը՝ հրապարակ է գալիս բաժան-բաժան անելու, չլատելու յեղափոխական ոյժերը և այդպիսով մենացնելու աշխատաւոր մասսաների դասակարգային գիտակցութիւնը, մենք համարելով ներկայ ժողովը մի յեղափոխական-պահպանողական քայլ և կլերիկալ-բուրժուազիայի կոմբինացիա՝ հեռանում ենք, արտայայտելով մեր բողոքը։

Ախալքալաքի պատգամաւոր՝
Արամ Տէր-Գրիգորեան

Բեսարաբիայի պատգամաւոր՝
Յա. Մ. Թումանեան

ՄԱՄՈՒԼ

«Մուրճի և ոչ-դանի միջև»—այսպէս է ընդունում «Военный Голосъ» լրագիրը զինուորների անմիջական հրամանատարների՝ օֆիցէրների դրութիւնը, որոնցից արդէն քաւութեան շատ նոխազներ են ընկել երկրի մէջ Պետական Դուման արձակելուց յետոյ ստեղծված սարսափելի դրութեան շնորհիւ։

Հանգամանքները ճակատագրական կերպով այնպէս են դասաւորվում, որ ներքին երկպառակութիւնը կառավարութեան և հասարակութեան միջև հետզհետէ սաստկանում է։ Ազատագրական շարժումը տեղի է տալիս բացարձակ յեղափոխութեան։ Այնտեղ, ուր չը կայ զօրք և ոստիկանութիւն, ժողովուրդը ազատ կերպով շրջում է կարմիր դրօշակներով և նիրբողներ է երգում նորածին ազատութեանը, իսկ ուր կան զօրքեր, նրանց ուղարկում են ցրելու այդ ժողովրդին և գնդակահարելու այդ ամբոխին յանուն երդումի և դիսցիպլինայի։

Բայց դիսցիպլինան մի դատարկ հնչիւն է դառնում, երբ խախտվում են այն նպատակները ու շահերը, որոնք շաղկապում են հրամանատարներին և ստոր դրեակներին իրար հետ։ Որովհետև միայն նպատակների ու շահերի այդ համանմանութեան, միատեսակութեան վրա է հիմնվում ստորադրեալների վրա ստանութեան զգացմունքը դէպի իրանց հրամանատարները, փոխադարձ սէրը և փոխադարձ յարգանքը, առանց որոնց չէ կարող դիսցիպլինա լինել և չը կայ զօրք...

«Наша Жизнь» լրագրում մօտ ժամանակներս յիշատակել էին մի ամբողջ շարք փաստեր, որոնք ապացուցանում էին, որ զինուորական իշխանութիւնը սիստեմատիք կերպով քաղաքականութեան գործիք էր դարձնում զօրքը։ Այդ հարցի առիթով «Военный Голосъ» լրագիրը գրում է. «Թւում է, որ նաւատորմը իր ամենիկան, ուզղակի կոչման էութեամբ պէտք է դերծ լինի քաղաքականութեանը միջամտելու վտանգից. չէ՞ որ նաւերը և նաւաստիները կոչված են լողալու ծովի վրա, մինչդեռ մեր, այսպէս ասած, «ներքին թշնամիները» դեռ ևս սեփական նաւեր չունեն...։ Բայց ծովային իշխանութիւնը ինքը ցանկութիւն յայտնեց ուղարկել իր նաւազներին ցամաքային պատժողական արշաւանք գործելու Շուրջը-սլտիական երկրում՝ ուղարկելով դրա համար ամբողջ երեք բատալիոն էկիպաժ։ Նաւաստիները քաջութեամբ ճնշում էին ապստամբութիւնը, բայց դրանից չէր շահվում դիսցիպլինան զօրամասերում, իսկ ագիտացիան և պրոպագանդան ընդհակառակը սաստկանում էին, որովհետև այդ է ընութեան օրէնքը. պատժողական արշաւանքները հնարաւոր են միայն թշնամիների երկրում, բայց ոչ մեր սեփական հայրենիքում։ Եւ իր իշխանութեան միջոցով յեղափոխութիւնը ճնշելու քաղաքականութեան մէջ մտած ծովային զօրամասերում, այդպիսի դաստիարակութեան ատուղները աճեցին աւելի վաղ, քան թէ կարող էին սպասել նոյն իսկ հեռատես մարդիկ, այդ իշխանութեան ակնայայտի սխալը ըմբռնողները... Եւ այն զինուորները, որոնք արդէն ներքին երկպառակութեան մէջ են խառնվել, մասնակցում են կառավարութեան և հասարակութեան միջև տեղի ունեցող կռուին, համեմատելով իրանց հրամանատար օֆիցէրներին կառավարութեան հետ, ընդդմամբ, մեքենայաբար ընտելանում են այն սարսափելի մտքի հետ, որ իրանց հրամանատարները, օֆիցէրները, իսկ նրանց հետ միասին և բոլոր օֆիցէրները ընդհանրապէս, զինուորների հետ դէնքի ընկերներ չեն, այլ նրանց ստորադրեալներ, թշնամիներ։

«Մենք ժողովրդի հետ ենք,—ասում են նրանք,—օֆիցէրները կառավարութեան հետ են, չինովնիկների հետ, որովհետև թէ դրանք և թէ միւսները ապրում են պետական ոռճիկով... Կառավարութիւնը պատերազմում է ժողովրդի հետ, իսկ օֆիցէրները մեզ հետ»...

Պառակտում կառավարութեան և ժողովրդի միջև. այդ է զինուորական ապստամբութիւնների պատճառը։ Մինչև որ այդ բոլորը չը վերացվի, մինչև որ չընդհատվի գաղանի և յայտնի բեպրեսալների քաղաքականութիւնը ազատագրական շարժման կուսակիցների դէմ, վրիժառութեան, արտակարգ դրութիւնների և պատժական արշաւանքներ ուղարկելու քաղաքականութիւնը մի կողմից, գաղանի և յայտնի խրախուսանքները միւս կողմից, չէ կարելի սպասել ժողովրդի խաղաղացմանը, և ոչ էլ կարգի ու դիսցիպլինայի վերականգնումին զօրքերի մէջ։ Իսկ առանց դիսցիպլինայի գործերը աւելի են վատանալու թէ իրայինների և թէ բարեկամների համար, քան թշնամիների համար։ Միայն Պետական Դումայի շուտ գումարումը, միայն անկեղծ վճռական որոշումը՝ ոտք դնել սահմանադիր-պարլամենտական ռէժիմի վրա, և միայն այդ որոշումը շտապով կանքի մէջ մտցնելը կարող են կանդնեցնել շարժումը զօրքերի մէջ։ Անցքերը չեն սպասում»։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Կովկասեան Փոխարքայի հրամանը

—

Բարձրագոյն ինձ վերապահված իրաւունքի հիման վրա, Թիֆլիսի նահանգի Թելաւ, Սղղնախ և Թիօնեթի գաւառներում յայտարարելով զինուորական դրութիւն, առաջարկում եմ Թիֆլիս քաղաքի, Թիֆլիսի, Բօրչալուի, Գօրու և Դուշէթի գաւառների ժամանակաւոր գեներալ-նահանգապետ գեներալ-լեյտենանտ Տիմոֆեյևին վարել Թելաւի, Սղղնախի և Թիօնեթի գաւառների ժամանակաւոր գեներալ-նահանգապետի պաշտօնը։

Ստորագրեց. Կովկասեան Փոխարքայ՝ գեներալ-ադիւտանտ կոմս Վորոնցով-Դաշկով։

Օգոստոսի 21, 1906 թ., Թիֆլիս

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԱՊԱԳԱՅՈՒՄ

Ո՞վ չը գիտէ, որ այս րօպէին ամբողջ Ռուսաստանի թէ գիւղացիութեան և թէ միւս բոլոր քաղաքացիների միտքը զբաղված է ամբողջապէս հողային հարցի լուծումով. հողային հարցի շուրջն է պտտում յեղափոխութիւնը, հողային հարցի ծանրութիւնն է վախեցնում կառավարութիւնը ապագայում։ Այժմեան պարագաներում հողային հարցի լուծումը անխուսափելի կերպով դրված է կառավարութեան և ժողովրդի առաջ. շատ իդեաներ կարող են մոռացուեան տալվել, շատ պահանջներ փոփոխվել, բայց հողային հարցը անպայման պէտք է իր բաւարարութիւնն ստանայ, ապա թէ ոչ նա կը դառնայ քրոնիկական և մերթ-մերթ կը բռնկվի զանազան անկիւններում, խաչընդոտ դառնալով քաղաքական կեանքի խաղաղ ընթացքին։

Ինչպէս յայտնի է, այդ ծանր խնդրի լուծ-

ծումը ամբողջ Ռուսաստանը սպառում էր Պետական Դումայից, որը իսկապես իր կանոնի ամենաթանկագին բաղկացուցիչն էր նուիրեց այդ հարցին և որի համար էլ վաղաժամ զոհ գնաց։ Այսպես թէ այնպես Պետական Դուման նման էր մի հայելու, որտեղ Ռուսաստանի կենդանը, նրա ժողովրդի հայեացքները ցոլանալով, կենտրոնանում էր մի ֆոկուսում և իր մաքուր պատկերը ամբողջացնում։ Անա այդ անդրադարձման պատկերը հողային հարցի վերաբերմամբ։ Դումայի թէ աջակողմեանները, թէ կենտրոնը և թէ ձախակողմեանները ընդունում էին, որ եկեղեցապատկան հողերը պէտք է յատկացնել աշխատաւոր գաւառացիներին գիւղացիութեանը։ Կը կազմվի մի երկրորդ Դումա թէ աշխարհ կը գայ մի այլ ժողովրդական հիմնարկութիւն, եկեղեցապատկան հողերի վիճակը չի փոփոխվի, այսինքն կը գրաւեն յօգուտ գիւղացիութեան օգտին։ Հարկ թէ կասկածի տեղիք լինի, որ նոյն իսկ միապետական բռնակալի դարում էլ կառավարութիւնը կը ցանկար վերջ տալ եկեղեցու անկախութեանը, զրկելով նրան հողային հարաստութիւնից։

Կրկնում եմ, կը լինի թէ ժողովրդական իսկական կառավարութիւն, թէ միապետական համեմված սահմանադրական մի քանի իրաւունքներով եկեղեցական հողերի գիւղացիութեան յատկացնելը անխուսափելի է։ Այդ եկեղեցապատկան հողերի շարքում գտնվում են և մեր եկեղեցական կալուածները։ Աւելորդ է յիշեցնել, որ այդ կալուածքների յարգունակ գրաւելը այնքան յուզմունք և իրարանցում առաջ բերեց մեր ազգի բոլոր խաւերում, բայց անհրաժեշտ է այդ աչքի առաջ ունենալ, որպէս զի հասկանալ խնդրի լրջութիւնը։ Ընդերը այնքան ծանր է, որ առանց հայ ազգի համաձայնութեան հայ պատգամաւորները ստիպված եղան Պետական Դումայի ազգային մասնաժողովում չը համաձայնվել ընդհանուր սկզբունքի հետ՝ եկեղեցական հողերը առանց վարձատրութեան յատկացնել գիւղացիներին, այլ պնդեցին առանձնապէս քննել հայոց եկեղեցու հողերի հարցը և այլ օրէնք հաստատել։

Պետական Դուման մեռաւ, հանդեաւ նրա հետ ի միասին և ազգային մասնաժողովը։ բայց հողային հարցի սկզբունքները մնացին վառ և աւելի կենդանութիւն ստացան ու ապատաւ են իրանց յաղթական պատկին։ վայ մեզ, եթէ այդ յաղթական հանդեսի ժամանակ մենք էլի կուշանանք, էլի ետ կը մնանք։ Ժամանակ է արդէն, եթէ ոչ ուշ, վճռել և մեր եկեղեցապատկան հողերի հարցը։ Աւելի յարմար ասէի, քան այժմեան բոպէն, հաղիւ թէ կանգնի։ Էջմիածնում հաւաքվում են ժողովրդի պատգամաւորները եկեղեցական-վարչական, զարգացական և այլն հարցերի կարգաւորութիւնով զբաղվելու համար։ Աւելի բանիմաց և հասուն եկեղեցական հողերի լուծման խնդրում մի այլ ժողով մենք շուտով չենք ունենայ. այդտեղ են հայ եկեղեցով հետաքրքրվող աշխարհական ներկայացուցիչները, նրանց ուրշն է հաւասարվված և հայ կղերի մի տասաւոր բազմութիւն, երկու տարբ, որոնք ամենից շատ շահագրգռված են եկեղեցու հողի վերջնական վախճանով։ Ես սրբազան պարտք եմ համարում առաջարկել մեր Կենտրոնական Ժողովին լուծել եկեղեցու հողերի հարցը, միաժամանակ յուսալով որ մեր հայ մամուլը և հասարակութիւնը առանձին ուշք կը դարձնեն այդ ժամանակվից կարևոր հարցի վրա։ Գրել երկար ու բարակ դրա մասին շատ հեռուն կը տանի մեզ։ համարեա բոլորն էլ համաձայն են խլել եկեղեցու հողերը և տալ գիւղացիներին։ Բայց ասուցէ հայ եկեղեցու հողերի մասին այլ կարծիքներ լինեն։

Առ այժմ մեզ յայտնի է, որ ամենք պնդում են, թէ հայ եկեղեցին ազգային է, ժողովրդական է և ոչ կղերական, ուրեմն հայ եկեղեցու հարստութիւնը օգուտ կը բերի միայն հայ ազգին և ոչ ինչ, որ մեր եկեղեցին ինքնուրոյն է, ազատօրէն, հեռակաց առանց հողերի չէ կարող իր գոյութիւնը պահպանել, որ եկեղեցու հողերից ստացված արդիւնքը ոչ թէ հոգեւոր դասակարգի կարիքներին բաւականութիւն տալու համար է, այլ մեծ մասամբ ծախսվում է զանազան բարեգործական և կրթական հիմնարկութիւնների վրա և որ եկեղեցական հողերը պատկանում են ոչ թէ միայն Ռուսաստանում գտնվող հայ եկեղեցուն, այլ դա ընդհանուր սեփականութիւն է հայ եկեղեցու անկախ կառավարչական սահմաններից։ Թերևս լինին և այլ կարծիքներ. դա կը պարզէ մամուլը. առ այժմ բաւականանք այսքանով։

Մեր եկեղեցական հողերը անպայման պէտք է յատկացնել գիւղացուն. այս է ժամանակիս պահանջը. վերջ պէտք է դնել այն յարաբերութեան, որ գոյութիւն ունի մեր գիւղացու իբրև շահագործվողի-կեղեքվողի և մեր եկեղեցու մէջ իբրև կալուածատէր-շահագործողի։ Անբնական և անօրմալ մի երևոյթ է, որ հայ եկեղեցին իրան համարում է ժողովրդական, ամեն քայլում խօսում է ժողովրդի շահերի մասին, ժողովրդի անունից, իր նշանակութիւնը, հեղինակութիւնը հիմնում է բարոյականութեան վրա, քրիստոնէական սկզբունքների վրա. այդ եկեղեցին իր բոլոր գոյութիւնը, շունչը և հոգին տեսնում է հայ ազգի ամենաժողովրդական դասակարգի գիւղացիութեան, այն էլ նրա մի մասի շահագործելու մէջ, որ հայ եկեղեցին քրիստիկվով զանազան ազգօգուտ սկզբունքներով զբաղվում է գիւղացիութեան այն մասան, որը պատահմամբ ապրում է նրան պատկանող հողի վրա։ Եթէ հայոց եկեղեցին ուզում է ուսումնարաններ բանալ, որովհետև դա օգուտ է ազգին, թող նրա ծախսն էլ, դարձն էլ քաշէ հայ ազգը ամբողջովին։ Եթէ հայ եկեղեցու անկախութիւնը անհրաժեշտ է, կարևոր է ազգային տեսակէտից, մենք բոլորս էլ շահագրգռված ենք դրանով, բոլորս էլ նիւթականապէս պէտք է օգնենք եկեղեցուն և ոչ թէ հարցի ծանրութիւնը թափենք խղճուկ գիւղացու վրայ և բաւականանանք նրանով, որ գիւղացին թէպտեւ դժբաղդ է, բայց դա օգուտ է ազգին։ Աւելի լաւ, որ հայ եկեղեցին ազգային է, ժողովրդական է. հայ գիւղացին քաղցած է, հող չունի, սակաւահող է. տաճիկահայ գաղթականը գործ չունի, թշուառ ընկած է այս անկիւնում, այն անկիւնում, իր օտարոտ կեանքը չարքաշ անց է կացնում սրանից օգնութիւն խնդրելով, նրա տանը տարուի նման ծառայելով. հայ ժողովրդական եկեղեցի, հոգ ունիս, տուր հողդ. քո հոգն անցնում է քո քաղցած հայ ծխականին։

Մի ակներև ճշմարտութիւն է, որ այլևս եկեղեցին չէ կարող պահել իր վեհութիւնը հայ գիւղացու աչքում, եթէ վերջ չը դնէ իր կալուածատիրական անօրժակին. գիւղացին շատ լաւ է հասկացել իր դասակարգային շահը. իսկ ով դեռ չէ ճաշակել այդ քաղցրութիւնը, նրան շուտով կարենացնէ ժամանակիս հոգսը հոանքը։ Եւ մի թէ հայ գիւղացու միակ ցաւը նրանումն է, որ հարկ է վճարում եկեղեցուն. գիւղացին նոյնքան տանջվում է և նրա ձեռքում, ով կապալով է վերցրել հողերը, ով գալիս է գիւղ տասանորդ հաւաքելու. այսպէս մեծ և փոքր շահագործողների մի ամբողջ շարք նստած է գիւղացու վզին և ապրուվի նման ծծում է նրա արիւնը։ Եկեղեցին պարտական է գիւղացու ցաւերը դարմանել, նրա հոգի ծարաւին յագուրդ տալ ամենց սպասելու, որ գիշատութեան ահարկու ալիքները գլոհ տան ներքևից—իրանից գիւղացուց և ստիպեն եկեղեցու պահարանին յանձնանջել։

Հողային հարցը կենտրոնական ժողովը կարող է լուծել անկախ տաճկահայերից և պարսկահայերից։ Բոլորիս յայտնի է, որ իրաք մեր կալուածքների արդիւնքով օգտվում է միայն Ռուսաստանի հայ ժողովուրդը։ Երկար ու ձիգ տարիների ընթացքում այդ տարբերութիւնը սրբագործվել է և դառել է մի ատանդական օրէնք մեզ համար։ Եթէ նոյնիսկ այդպէս չը լինին, մի թէ դա կարող է խոչընդոտ հանդիսանալ կենտրոնական ժողովին իր հեղինակաւոր ձայնը բարձրացնել գիւղացու օգտին և խանգարել Վենտիան Հայրիկին ժողովի ցանկութիւնը կատարել իր հայրապետական լիազորութիւնով։

Ուրեմն մեր գիւղացու շահերը այս բոպէիս պահանջվում են, որ եկեղեցական հողերը յատկացվին հայ գիւղացուն. թէ ինչպէս իրականացնել գիւղացու այդ իդեը, առայժմ հարկ չը կայ գրա մանրամասնութիւնների մասին խօսելու. կենտրոնական Ժողովը այդ հարցում աւելի ձեռնհաս է, քան իր նրա առաջ դրված է մանրամասն տեղեկագիր, թէ ինչով է ապրում հայ եկեղեցին, ինչ հողեր ունի, ինչ արդիւնք է տանում և ինչի վրա է ծախսում ստացած արդիւնքը։ Պէտք է միայն սկզբունքով վճռել, որ հայ-լուսաւորչական եկեղեցու հողերը անպայման և անյապաղ պէտք է յատկացնել գիւղացուն, իսկ թէ ինչ ճանապարհներով, եթէ այդ հարցը վճռելու անհան է կենտրոնական Ժողովը և կամ հոգևորականութիւնը, դիմեցէք գիւղացուն և նրա հետ միասին քանդեցէք այդ հանգոյցը։ Ցաւենայն դէպս եթէ ոչ ծախելու, գոնէ բաշխելու իրաւունքը վերկում է եկեղեցու Վեհը. նոյնանման օրինակներ կան մեր եկեղեցու պատմութեան էջերում։

Այսպէս հայ գիւղացին սպասում է, որ եկեղեցին ինքը իր ներկայացուցիչների բերանով կը զիջէ նրա արդար պահանջին։

Բժիշկ Այվազանց

ՊԱՀԱՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Օգոստոսի 14-ին տեղի է ունեցել պարատակների մի մեծ խորհուրդ։ Զբաղելով որ խորհրդակցութիւնը բացառապէս նպատակ է ունեցել որոշելու կառավարութեան ապագայ քաղաքականութիւնը, սակայն, այս անգամ էլ, ինչպէս ասում են, ոչ մի որոշ եզրակացութեան չէ եկել։ Այդ դէպքում էլ դիկտատուրայի և բնաբնսիվ միջոցները ստստկացնելու հարցը առարկութիւնների է հանդիպել, այն մտքով, որ դա հաղիւ թէ օրէնք բարեյաջող հետևանքների հասնի։ Մինոյն ժամանակ մատնանիշ էր անվում այն հանգամանքի վրա, որ վերջին ժամանակներս ձեռք առնված ռեպրեսիաները ապացուցին, որ այդպիսի միջոցները յեղափոխականներին չեն սարսափեցնում, այլ, ազդելով հասարակութեան վրա, ընդհանրապէս աւելի ևս կը գրգռեն նրանց։ Մանաւանդ որ գիկտատուրան, իսկապէս, չատ քիչ է տարբերվում գինուորական դիրութիւնից։ Այդ մինոյն նիստում զարթեցրվեց և այն հարցը, թէ որքան յարմար է այժմ գիմել հասարակական գործիչներին։ Գիշերվան մօտ տարածված լուրերին նայելով, բանակցութիւնները կը վերսկսվեն մօտ օրերս, և, ինչպէս ասում են, այս անգամ վճռված է մեծ զիջումներ անել, միայն թէ այն պայմանով, որպէսզի ամենախիստ միջոցները սահմանվեն անիշխանական բնաւորութիւն ունեցող վարմունքների համար։ Հաւատացնում են, որ այդ խորհրդակցութեան հետևանքը եղել է այն, որ վճռել են Պետերսօֆի կանչել Դ. Շիպովին և Ա. Ի. Գուչկովին։

Այնուամենայնիւ զիկտատուրայի հարցը դեռ ևս չէ կարելի հերթականից դուրս հանված համարել։ («Тов.»)

—«Страна»-ին հաղորդում են, որ մօտ օրերս կայանալու է կայսրութեան բարձրաստիճան անձանց արտակարգ խորհուրդը ներքին քաղաքականութեան ուղղութեան հարցը լուծելու համար։ Այդ խորհրդակցութիւնը կազմուն է կայսրութեան ներսում և ծայրերկիրներում վերջին ժամանակներս կատարվող անցքերի հետ, որը իր բնաւորութեամբ համանման է այն խորհրդակցութեան, որ գումարվեց 1881 թվի մարտի 1-ից անմիջապէս յետոյ։ Նրա հետևանքներն էլ նոյնքան վճռորոշ նշանակութիւն կունենան մեր ներկայ ժամանակվից դարաշրջանի համար։ Նրան կը մասնակցեն ոչ միայն նրանք, որոնց ձեռքումն է այժմ իշխանութեան գերը, այլ և նրանք, ում կարծիքին նշանակութիւն են տալիս պատասխանատու շրջաններում. մինոյն ժամանակ կը հրաւիրվեն մօտ անցեալի պետական գործիչները։ Խորհրդակցութեան նախաձեռնութիւնը ծագել է պետական պաշտպանութեան մասնաժողովում և ջերմ պաշտպանութիւն է գտել միևնոյնպէս խորհրդի անդամների մեծամասնութեան կողմից, որոնք արդէն այդ տեսքով ունեցել են մասնաւոր խորհրդակցութիւն։

—Ստոլիպինի դէմ կատարված մահափորձի առաջին տպաւորութիւնից յետոյ կառավարական շրջաններում արդէն սկսել էին խիստ կերպով թեքվել դէպի աջ։ Ներկայումս, սակայն, տրամադրութիւնը բաւականին խաղաղվել է։ Արդէն ընդունում են այն փաստը, որ բեպրեսիաների չափազանց ստստկացումը կարող է միայն անարխիա ստեղծել։ Ինքը Ստոլիպինը յայտնել է, որ մահափորձը ամենևին չէ կարող ներգործել նրա վրա և հարկադրել փոխելու իր ունեցած հայեացքները Ռուսաստանի ներքին քաղաքականութեան մասին։ Իր մտերիմներից մէկին, իսկակցութեան ժամանակ, նա ասել է. «Յեղափոխական գործիչները չեն կարող արգելք լինել ինձ, մինչ ես ողջ եմ, ներկայ պաշտօնումս անելու այն, ինչ որ ես համարում եմ բարիք Ռուսաստանի համար։ Միապետի կամքը անդրդվելի է, և երկրի մէջ կը վերականգնվի օրինական կարգը ազատութիւնների հիման վրա»։ («Рус. Сл.»)

ՍՏՈԼԻՊԻՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

«Рус. Сл.» լրագիրը հաղորդում է հետևեալը. «Հոկտեմբերի 17-ի միութեան» նշանաւոր գործիչներից մէկը, որ Ստոլիպինի հին բարեկամն է, Ապտեկարսկի կղզու վրա պատահած դժբախտ անցքի երկրորդ օրը այցելեց նրան։ Այցելուն, բնական է, երկիւղ յայտնեց կառավարութեան քաղաքականութեան ուղղութեան վերաբերմամբ, բայց պրեմիէրը պատասխանեց. «Դուք իրաւունք ունէք. վերջին օրերի անցքերը կարծես թէ մեր առաջ վերակենդանացնում են Ալէքսանդր II-ի թագաւորութեան վախճանը, կարծես կրկնվում են նախկին արհաւիրքները, բայց աւելի մեծ, աւելի ընդարձակ չափերով։ Անվիճելի է և այն, որ երկրում արգութեամբ աճում է ռեակցիան որամգրութիւնը, և շատերին ոչ անտիմն կերպով թւում է, որ կառավարութիւնը գժտաբ թէ հետ պահի իրան ռեակցիոն շուղից։ Ինչ վերաբերում է իմ անձնականին, ես ամենևին համաձայն չեն գիմադրական մամուլի արտայայտած հայեացքներին, որ Պետական Դումայի շուտափութ գումարմամբ միայն հնարաւոր է ձնրել տերբորները։ Ես վճռական կերպով պնդում եմ, որ դա չի կազմվի ոչ ձախակողմեան «կադետներից», ոչ էլ մանաւանդ սոցիալիստներից», ոչ էլ մանաւանդ, որ նրանք այնտեղ գիմադրական կուսակցութիւն կը կազմեն, սակայն նրանց ոյժը կը լինի ոչ աւելի, քան այն, ինչ որ ունէին աջակողմեանները առաջին Դումայում։ Դումայի յաջորդ անդամ կազմված կը լինի չափաւորներից և լեզալ գիմադրական խմբակներից։ Այդպիսի մի Դումա ոչ մի դէպքում չէ կարող հեղինակաւոր լինել յեղափոխական կազմակերպութիւնների համար, որոնց նպատակը մի է. միապետական բռնակալը մի է. միապետական բռնակալը և նրա տեղ հասարակապետական կարգեր հաստատելը։ Այժմ հարկաւոր է հզօր և լիակատար պետական իշխանութիւն, որը չը ճնշվի ոչ անարդար քննադատութիւնից, ոչ էլ կարճատես ցուցմունքներից այնպիսի մարդկանց, որոնք իրերի մասին դատում են հեռուից միայն։ Կրկնում եմ, հարկաւոր է հաստատուն, լիակատար և ազնիւ իշխանութիւն»։

—Ցանուն ինչի պէտք է գործէ այդ իշխանութիւնը,—հարցրեց նրան խօսակիցը։

—Ցանուն նախորդված բարեկարգումների, առանց մի քայլ անգամ յետ նահանջելու. և առաջիկայ մօտիկ օրերում այդ բանը բոլորվին կապացուցվի։

—Սակայն չէ՞ որ այդ բարեկարգումները հասարակութեան վստահութիւնը չեն վայելում, և, բացի դրանից, հաւիս թէ առանց հասարակութեան համակրութեան և աջակցութեան կառավարութիւնը կարող լինի մաքառել տերբորների դէմ։

—Կառավարութիւնը հաւատացած է, որ այդ համակրութիւնը նա կը գտնէ ժողովրդական մասսայի մէջ, և միևնոյն ժամանակ նա չէ կարող չափազանցնել գիմադրական ոյժի նշանակութիւնը։ Ինձ միշտ էլ թւում էր որ գիմադրական խմբակներին միայն մեծ նշանակութիւն են տալիս և գրանով էլ նրանց ազդեցութիւնը մեծացնում են։ Այսինքն դա միայն իմ անհատական կարծիքն է։ Այս, բարեկամս, շատ ծանր է ինձ համար, բայց ես ամենևին չեմ շփոթվում և աշխոյժով նայում եմ միշտ դէպի առաջ։

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Անցեալ տարվանից սկսած հայ-թուրքական ընդհարումները մեր ժողովրդի համար անտրաժեշտ դարձրին մի նոր, մինչև այժմ բոլորովին անսպասելի ու գոյութիւն չունեցող գործ—ինքնապաշտպանութիւնը։

Երկու տարի առաջ ոչ մի հայի մտքով անգամ չէր անցնի, որ այսքան երկար ժամանակով նրա հետ կոչը-ղոքի ապրող, կարծես արդէն նստակեաց կեանքի և խաղաղ գրութեան սովորած, հարևանը—թուրքը կարող է յանկարծ, այնպէս միահամուռ ոյժով, կարծես կախարդական գաւազանի ազդեցութեան տակ, ամեն կողմից փուլ գալ միամիտ հայի գլխին ու նրան, յանկարծակիի բերելով, խաչաձև ջնջման սպառնալիքի տակ դնել։

Սակայն տխուր ու ամօթալի իրողութիւնը կատարվեց իր բոլոր սարսափէլի ու քաոսեալի կողմերով։

Ռուսաստանի վիթխարի յեղափոխութեան ահաւոր ուրուականից սարսափող նրա փտած բիւրօկրատիան մի խիստ նենգաւոր ու սատանայական միջոց հնարեց յեղափոխական հովերով արդէն ատանվող Անդրկովկասում իր խարխուլ պատուանդանը ամրապնդելու համար։ Դա անսիրտ և ոմարգի պրովոկացիան էր, որով նա կարողացաւ շատ հեշտութեամբ թոյնով վարակել ոգէս ու խաւար թուրքի սիրտն ընդդէմ հայի, այն հայի, որին այդ բռնակալ բիւրօկրատիան համարում էր Ռուսաստանի յեղափոխութեան առաջամարտիկ ազդերից մէկը, քանի որ հէնց սա էր, որ ըմբոստ դիմադրութեան օրինակ էր ցոյց տուել ամբողջ աշխարհի առաջ՝ նրա անհելի ոյժի դէմ դեռ այն ժամանակ, երբ ամենքն էլ գոռում էին նրա ծանր թաթից...

Իսկ թուրքը ենթարկվելով պրովոկացիային և ամօթալի գործիք դառնալով ընդհանուր թշնամու ձեռքում, թէև ի հարկէ սկզբում չէր հասկանում դրա իսկական նպատակը, սակայն նրա հաշուին գալիս էր, երբ նրա ականջին ասում էին.—«Դու աւելի բազմաթիւ ես և ուժեղ քան հայը, գնա սպանիր նրան, թալանիր ու այրիր նրա կայքը և դրա համար քեզ ոչ միայն չեն պատժի, այլ և կօգնեն...»։ Մարդասիրութեան այդ սերմերը զարարտ հող էին գտնում թուրքի սրտում, ուր հնադարեան սրիտեռուշտ բնակիչների հետ միասին վառ էր և ատելութեան ու նախանձի կրակը դէպի հայը, որի աւելի առաջադիմութիւնն ու աշողակութիւնը կեանքի մէջ ծակում էր դանդաղ ու յետամնաց թուրքի աչքը...

Եւ թուրքն ամուր սեղմեց դէպի նրան մեկնված այդ դիւական ձեռքը. նա ենթարկվեց պրովոկացիային, մանաւանդ որ նա ամենևին չէր երդիչ հանդիպել հայի կողմից այդպիսի անսպասելի ուժեղ դիմադրութեան, ինքնապաշտպանութեան, հակայարձակման...

Սկզբում կարծես ճիշտ էր գուրս գալիս նրա հաշիւը։ Բազուի և Նախիջևանի առաջին յարձակումները փառաւորապէս աջողվել էին թուրքերին, և նրանցից շարդ կրած հայերը զլխիկոր ու ապշած, ճնցել էին բոլորովին լքված ու յուսահատ։ Թւում էր թէ ամեն ինչ կորած է նրանց համար... Մինչև իսկ մի բոպէ եղաւ, երբ հայերը բոլորովին ատած, չէին իմանում թէ ինչ է կատարվում իրանց շուրջը և թէ ինչի՞ համար էր այդ բոլոր արիւնահեղութիւնը։ Նրանց մտքով նոյն իսկ չէր անցնում դիմադրել թուրքերին, ինքնապաշտպանութեան դիմել, և նրանք միայն սրսառուչ ու ապիրատ յորդորներ էին կարդում նրանց յիշել զարևոր հարևանութիւնը, եղբայրութիւնը, բաղդակից դրութիւնը և այլն ու վերջ տալ այդ վայրենի ու անմիտ արարքին։

Սակայն թուրքի ատամն արիւնոտել էր. վայրագութեան առաջին փորձերը աջողվել էին նրան և այլ ևս նրա ոգէս ուղղի վրա չէին կարող ազդել մարդասիրութեան բարոյական կոչերը. նա չէր կարողանում հանանել, չէր ուզում լսել դրանց. աջողութիւնը կուրացրել էր նրան. հայի կեանքն ու գոյքը նրան հալալ էր...

Մի ելք էր մնում միայն այդ ճակատագրական դրութիւնից—ոյժի դէմ ոյժ գործ դնել, բռնութեան դէմ բռնութիւն։ Իսկ ո՞րտեղից կարող էր հայը ձեռք բերել այդ ոյժը. նա բոլորովին անպատրաստ էր. ժամանակ և յարմարութիւն չը կար իսկոյն կազմակերպվելու. անհրաժեշտ էր կողմակի օգնութիւն, և դա չուշացաւ հրապարակ գալ այդ կրիտիկական բոպէում։

Դա Հ. Յ. Դաշնակցութիւնն էր, որ։ եկաւ պատնէշ կանգնելու թուրք կատաղած խուժանի գրոհի դէմ և պաշտպանելու նրա յարձակումից հայի կեանքը, գոյքը, պատիւը...

Եւ նա իր սառնձնած այդ սուրը ու ծանր պարականութիւնը առաջ տարեց ամենամեծ եռանդով ու տոկուն անձնուիրութեամբ, որը և պատկվեց փայլուն աջողութեամբ։ Սպանող, աւերող ու սրբագործող թշնամին ամեն կէտերում յետ էր մղվում մեծ կորուստներով. մեր աշխարհի ամեն ծայրերից բարձրացած հայերի ոգի ու կոչին փոխարինեցին յաղթական երգերը...

Ինքնապաշտպանութեան գործը պատկեց Դաշնակցութեան 15-ամեայ կեանքը յաղթութեան անթառամ դափնիով...

—

Սակայն ինքնապաշտպանութեան գործը, որքան էլ ստիպողական ու անխուսանգելի, նա ամենամենայնիւ իսկապէս մի կողմնակի ծանր բեռ էր, որ, նոյն իսկ ժողովրդի բուռն պահանջով, իր ուսերին վերցրեց Դաշնակցութիւնը։

Նա չը վայ այդ կազմակերպութեան ոչ 1892 թվին հաստատած հիմնական ծրագրի մէջ և ոչ էլ նոյն իսկ 1904 թվին կազմած «Կովկասեան գործունէութեան նախագծում»։ Զը կայ, որովհետև թէ Դաշնակցութեան հիմադիրներն այն ժամանակ չէին կարող նախագուշակել մի այդպիսի թուրքական անմիտ տարերային շարժում և թէ առնասարակ հէնց սկզբից այդ կազմակերպութիւնը կոչված էին համարում մի յատուկ միսիա կատարելու, մի սպեցիալ նպատակ իրագործելու համար.—դա տաճկահայոց խնդիրն էր։

Եւ Դաշնակցութիւնը իր հիմվելու օրից սկսած շարունակ 13 տարի—1890 թվից մինչև 1903 թիւը միայն ոգևորվում ու տարվում էր այդ մի հատիկ սրբազան գործով, նրան նուիրելով իր բոլոր ֆիզիքական ու բարոյական ոյժերը... Յետոյ, միայն այս վերջին տարում տխուր անհրաժեշտութիւնը նրա վզին գրեց ինքնապաշտպանութեան ծանր գործը, իսկ դա էլ կարծես բաւական չէր, նրա նորազոյն զիկավարները անձնատուր եղան նեբրին զասակարգային կռիւներ, աշխատեցին իրանց ձեռքն առնել ու զիկավարել ազգային-զբրոցական, բարեգործական հասատատութիւնները...

Դաշնակցութեան հիմնական միակ նպատակը—տաճկահայկական զբաղող խնդիրը յետին տեղ բռնեց, նեմեսացաւ, նա համարեա մոռացութեան տրվեց... Այժմ այլ ևս չէ լսվում այն նշանաբանը թէ՝ «Դաշնակցութիւնը Տաճկահայաստանի համար է»...

Սակայն այդպէս շարունակել չէ կարող։ Տաճկաստանում նախապատրաստվում են դէպքեր, որոնց դիմաւորելու համար այնտեղի հայ ժողովուրդը պէտք է միշտ կազմ և պատրաստ լինի։ (Ռուսաստանի յեղափ. հովերը տարածվում են և այնտեղ. տաճիկ ժողովուրդն սկսում է շարժվել, քաղաքական բարդութիւններ կարող են առաջ գալ ցաւագար սուլթանի գուցէ մօտալուտ մահից յետոյ և այլն)։ Դաշնակցութիւնը եթէ ոչ առաջնակարգ, գոնէ մի բաւական խոշոր դեր ունի այնտեղ կատարելու, որից նա ձեռնպահ մնալ չէ կարող. մի այնպիսի մեծ ու ընդարձակ ասպարէզ ունի գործելու, որի համար նրա բոլոր ուժերն անգամ շատ քիչ են, ուր մնաց որ դրանց ամենամեծ մասն այժմ վատնվում է Անդրկովկասի վրա...

Պէտք է Դաշնակցութիւնը վերադարձնել իր հիմնական նպատակին—«մի միայն տաճկահայոց խնդրին»,—ազատելով կովկասեան ու զասակարգային գործունէութիւնից, ինչպէս և ինքնապաշտպանութեան ու հասարակական-զբրոցական հասատատութիւնները զեկավարելու հոգսերից...

Սակայն մանաւորենք մեր խօսքը, նորից դառնալով ինքնապաշտպանութեան խնդրին։

—

Դա պէտք է վերցնել Դաշնակցութեան ուսերից և ամբողջապէս յանձնել ժողովրդի ձեռքը, որովհետև նախ նա, ինչպէս ասացինք, կը լանում է Դաշնակցութեան զինուորական ու նիւթական ոյժերի մեծ մասը և թուլացնում նրա իսկական (տաճկահայոց) գործը։

Երկրորդ՝ նա, զինուորականութիւն մտցնելով մեր մէջ, ոչ միայն անհամեմատ աւելի թանգ է նստում մեր ժողովրդին, այլ և օտար տեղերից բերված զինուորները, մանաւանդ խաղաղ ժամանակ, կարող են իրանք էլ չարիք դառնալ խաղաղ ժողովրդի համար, ինչպէս որ տեղի ունեցան մի քանի անախորժ, թէև ի հարկէ խիստ հազուագիւտ դէպքեր, որոնք այնուամենայնիւ անխուսափելի են չը նայած ամենախիստ դիսցիպլինային...

Երրորդ՝ չը պէտք է ժողովրդին վարժեցնել ինքնամակուութեան. պէտք է նրան սորվեցնել որ նա ինքը կարողանայ իր գլխի ճարը տեսնել նեղ բոպէում և ոչ թէ անոյտ իր ոյժի վրա՝ միշտ գրսի օգնութեան ապաւինել։ Մեր ժողովուրդը միշտ մեծ ակնածութեամբ և հաւատով է նայում գրսից եկողների վրա. պէտք է գրել նրա այդ նախապաշարմունքը և համոզել, որ ինքն ամենից լաւ կարող է պաշտպանել իր կեանքն ու պատիւը... Եւ վերջապէս աւելի ցանկալի է ժողովրդի գիտակցաբար ընդհանուր ինքնապաշտպանութիւնը, քան թէ ամեն անգամ գրսի ոյժով նրան պաշտպան կանգնելը և վանդից փրկելը։

Սակայն ինքնապաշտպանութեան գործը ժողովրդին յանձնելու ժամանակ Դաշնակցութիւնը չը պէտք է միանգամից դա թողնի և ձեռքերը լուանալով մի կողմ քաշվի։ Պէտք է այդ յանձնումը կատարել անապատ, եռանդով, բայց և միևնոյն ժամանակ ստիճանաբար։ Անհրաժեշտ է, որ Դաշն. կենտրամարմինները հմուտ և փորձված ինտարուկտորներ ուղարկին գաւառների մինչև ամենախուլ անկիւնները և ամեն տեղ կազմակերպեն տեղական ինքնապաշտպանողական խմբեր, իրանց վրա առնելով դրանց զեկավարութիւնը մինչև այնքան ժամանակ, երբ նրանք արդէն պատրաստ կը լինին Դաշնակցութեան գործերին փոխարինելու և իրանք իրանց պաշտպանելու։ Եւ երբ այդ սկզբնական անհրաժեշտ աշխատանքը կատարված կը լինի, այն ժամանակ քիչ քիչ պէտք է գաւառից հեռացնել Դաշն. զինուորներին, նրանց տեղն խոկոյն կանգնեցնելով տեղական կամաւորներին։

Այս վերջիններն այն առաւելութիւնը կունենան զինուորներից, որ հասարակութեան վրա շատ քիչ ծախս կը նստեն, քանի որ ռոճիկ չեն ստանալ նրանից, այլ, ապրելով իրանց տանը, կը պարապեն իրանց արհեստով և միայն վտանգի բոպէում ձեռք կառնեն հրացանը։ Բացի դրանից տեղացի կուռն աւելի ծանօթ լինելով տեղական պայմաններին շատ աւելի հեշտութեամբ կորոշէ թէ իր և թէ թշնամու ուժեղ և թոյլ կողմերը և, համոզված ենք, շատ էլ աւելի քաջ ու անձնազոհ կերպով կը կռւի, քանի որ հակառակ դէպքում նա անհամեմատ աւելի շատ բան կը կորցնի...

Այս 1½ տարվայ ընթացքում Դաշնակցութիւնը պատուով պարաւ իր վրա վերցրած այս կողմնակի ծանր խուսափելի բեռը—ինքնապաշտպանութեան գործը, անգին ծառայութիւն մատուցեց ամեն կողմից պաշարված ու յանկարծակիի եկած շղմած հայ ժողովրդին և իրաւամբ արժանի եղաւ «հայ ժողովրդի պաշտպան» տիտղոս կրելուն. այժմ էլ, թէև դեռ վտանգը բոլորովին չէ վերացած, սակայն ժամանակ է, որ նա աստիճանաբար և աննկատելի կերպով թօթափէ իր վրայից այդ ծանրութիւնը—ժողովրդի ձեռքը տալով նրա ինքնապաշտպանութեան գործը—և այդպիսով ազատէ իր ձեռքերը, բոլոր ոյժով նուիրվելու տաճկահայ մարտիրոս ժողովրդի արդարն դատի պաշտպանութեանը, քանի որ վերջին ժամանակներս «զուլումի աշխարհից» հայի յուսահատ ճիչերը միշտ աւելի ու աւելի բարձր են լսվում...

Լ. Մարիոսեան

Երևան, օգոստոսի 10-ին

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

(Ստոլիպինի մահափորձը)

—

13 օգոստոսի

Երէկ երեկոյեան՝ ժամի 7-ից ուշ մայրաքաղաքիս կենտրոնական մասերում սկսվեց տարածվել մինիստր Ստոլիպինի մահափորձի և սրա հետ կապված կատաստրոֆի լուրը։

Առաջին և վերջին անգամը չէ, որ մայրաքաղաքը տեսնում է մինիստրների հեղեղական մահաբերները։ գեռ նրա յիշողութեան մէջ թարմ է իր ուսերի վրա կած նախանցեալ տարվայ գազօնական յունվարի 9-ը. ամենուրեք անընդհատ, շարունակ հոսող արիւնը կաշկանդել է նրա միտքը ու հոգին, խախտել է մայրաքաղաքացուն յատուկ նուրբ զգայնութեան կարողութիւնը և նա այսօր մեծաւորչէ, որ իր նմանների մէջ եզակի բնաւորութիւն կրող այդ մահափորձը իր սարսափելի հետևանքներով ընդունում է առանց մի որևէ ալեկոծման և յուզման նշանների, և կարծես թէ այդ նրա համար անսպասելի չէր...

Երէկ տարաժամ լինելու պատճառով զըժուար էր մի ճշգրիտ տեղեկութիւն իմանալ զոհերի թւի մասին. լրագրական մէկը միւսին հակասող յաւելուածներն էլ շատ բան չէին ասում։ Այսօր միայն յայտնի ՝նեղաբ ամենը բան. սպանվածների և վիրաւորների թիւը հասնում է մինչև 90-ի։ Ռումբը այնպիսի մի սաստիկ ոյժ է ունեցել, որ մարդկանց դիակները փոխարէն՝ միայն այլանդակված մարմնի մասեր են գտել թէ տան փլատակների տակ, թէ դուրսը—փողոց շղոտա՝ և թէ տունը շրջապատող ծառերի վրա։

Կատաստրոֆի զոհերը բոլորն էլ համարեա թէ պաշտօնական բարձրաստիճան մարդիկ են։

Դէպքի եղելութիւնը այսպէս են պատմում. ցերեկվայ 3 ժամ 20 բոպէին (մեր ժամացոյցով 4 ժամ 40 բոպէ) երեք մարդուր հագնված մարդիկ, մէկը քարտուղարի հագնված, երկրորդը գեներալի, իսկ երրորդը ժանդարմի կապիտանի հագուստով լանջ-լանջով գալիս—կանգ են առնում մինիստրի տան մուտքի առաջ, որ փողոցի վրա է։ Զը նայած որ վաղուց ի վեր մինիստրի առն

գանում մանաւանդ արհեստաւորների և մանր վաճառականների մէջ և դրանց հետ միասին կազմում է մի կուսակցութիւն «ժողովրդական կուսակցութիւն» անուան տակ։ Ուրիշ հարց է թէ՝ որքան ճիշտ էին ըմբռնած այդ տեղի ժողովրդի շահերը, որքան գիտակցութիւն էր տիրում դրանց շարքերում, որովհետև այդ ուղղութեամբ գործունէութիւնը միայն այժմ մի օրերումն է փոքր ի շատէ ճիշտ ուղղուեցվել, ժողովրդին ու հոգի առել։ Յամենայն դէպս եթէ այդ կուսակցութիւնը առաջ մեծ բաներ չէր անում, գոնէ ինքն իրան չէր թաւանանում, ինքնիրաւարար հարան չէր գալիս նրանց հարն ու քարին, հարստահարողին ու շահագործողին, որպէս և հարստահարողին ու շահագործվողին, որը Ախալցխայի նման մի քաղաքում, ի հարկէ, արհեստաւորների ընթացքում գործող երիտասարդութիւնը, ունենալով իր հետևում տեղացի մանր արհեստաւորներին, սկսում է փոքր առ փոքր ներգործական դեր խաղալ քաղաքի հասարակական ընտրութիւն ունեցող այնպիսի թնդիրներում, ինչպէս օրինակ դպրոցական, հոգաբարձական, երեցփոխական և վերջերս նաև քաղաքային լիազօրներ ընտրելու հարցում։

Ահա այդ ժամանակ որպէս փոթորիկ առաջ է գալիս հայ եկեղեցական-կալուածների գրաւումը, և Ախալցխայի երիտասարդութիւնը ցոյց է տալիս իրան՝ պաշտպան կանգնելով ժողովրդական հարստութիւնը, և կարէ է մարդ կասկածել թիրա ոյժի դէմ։ Իսկ դրա հետևանքը լինում է այն, ինչ որ եղաւ հաւանաբար Անդրկովկասում. ընդդիմադիր ոյժերին բռնեցին և որպէս «խռովարարների» աքսորեցին Ռուսաստանի ներքին նահանգները։

Այդ եղելութիւնից յետոյ սկսում է Ախալցխայի ներքին կեանքում մի այլ շրջան, դա Դաշնակցութեան երևալը և նրա գործունէութիւնն էր։

Ժողովրդի գլխաւոր զեկավարներից շատերը աքսորված են, ինքը ժողովուրդը վրդովված, զրկված. հողը պատրաստ էր, և ժողովրդական այդ պատրաստ տրամադրութիւններից ցանկանում է օգտվել Դաշնակցութիւնը, տեղեկով Ախալցխայում իր յատուկ մարմինը, մի մարմին, որի մէջ, ինչպէս ամեն տեղ, մտնում են ամեն տեսակի և մեծութեան հայ քրիստոնեաներ, սկսած յաղորդից մինչև տիրացուներ, վաճառականից մինչև արհեստաւոր բանւորը, մի խօսքով բոլոր «հայազգիք», և այդպիսով այդ յեղափոխական կազմակերպութիւնը սկսում է գործել, գտնել, իշխել և, որ ամենագլխաւորն է, դրամ ժողովել։

Զուտ հայկական, ազգային մի կուսակցութիւն, առանց իսկական, ներքին որոշ ամենասական և քաղաքական ծրագրի, առանց դասակարգային կռուի գիտակցութեան, սակայն ուժեղ իր քանակով, իր բազմութեամբ և իր կապերով։

Եւ այսպէս ահա ուրիշ տարի ու կէս Դաշնակցութիւնը բառիս բուն մտքով տէր ու հրամայող է հանդիսանում Ախալցխայում և նրա շրջանում ճիշտ այնպէս, որպէս և ամեն տեղ։

Բայց այդ երկար չէ տևում։ Օգոստոսին աքսորից վերադառնում են աքսորված երիտասարդներից մի քանիսը և գտնում են Ախալցխան փոխված, բոլորը «մի տուն, մի հովիւ դարձած», բոլորը մի բարձրագոյն ոյժի և հրամանատարութեան տակ, բոլորը լուռ, հնազանդ, կոյր, անխօս—մի խօսքով տիպի բիւրոկրատիզմ իր ողջ համով-հոտով, իր արտայայտութեան ընդարձակներով։

Նաև բնական է, որ վերադարձած նախկին ոյժերին դուռ չէ գալիս այս «յեղափոխական տրիւնիթեան», ուր գայլ ու գառը միասին արածում են և գայլերը. ինչպէս միշտ, իրանց գործն են տեսնում, իսկ գառները ձայն հանել չեն կարող. ուեւայորեք դրա վրա զինուորներին, հրամանատարներին և այլն և այլն, և ձեզ պարզ կը լինի Ախալցխայի դրութիւնն ու կեանքը 1905 թ.-ին։

Բայց երիտասարդութիւնը չէ լռում, նա չէ հնազանդվում այս նոր պետութեանը և ուզում է ինքնուրոյն լինել, վերանել և շարունակել այն գործը, որ նա ունէր անցեալում, մի գործ, որի վախճանը լինելու էր այն, որ արհեստաւորութիւնը պէտք է ղեկչի, բժանվեր այն տարրերից, որոնք բան իրանց էութեան հակայէզոփոխական էին և ուրիշ կերպ էլ չէին կարող լինել, որոնց սակայն որպէս հայերի և հարկատուների, հիշոն ատած, պատահելիների, իր հովանաւորութեան տակն էր առել դաշնակցական տեղական մարմինը։

Ներքևութիւնը, անտագօնիզմը գնալով մեծ ծաւալ է ստանում, մանաւանդ այն օրից, երբ Ախալցխա է ուղարկվում տեղական դպրոցների տեսչի պաշտօնով պ. Թ...ն, մի անձնաւորութիւն, որը, ինչպէս տեղեկացանք, անհամակրելի է դառնում լոկ նրա համար, որ Դաշնակցութեան թեկնածուն էր։ Նրա մասին վատ բան ոչոքից չեմ լսել, նոյն իսկ նրա հակառակորդներից, սակայն հէնց այն բանը, որ տեսչի ընտրութիւնը (?) եղել է «թ վերուստ» ցուցմունքով և որ Ախալցխայի տեղական ոյժերի մէջ կային տեսչութեան արժանի անձիք, որոնք սակայն դաշնակցական չէին, հէնց այդ բանը դառնում է մի casus belli տեղական արհեստաւորութեան և նրա զեկավար երիտասարդութեան դաշնակցական կօնդօմենտի մէջ։

Տեսչական հարցը, տեսչական պաշտօնը երկու պատասխան այն խնդրին էր, որի համար 7—8 ամիս ալեկոծվում էր Ախալցխան, և այդ պայքարը տարիվ և պատճառ է դառնում կրօնական երկու ուրիշ կուսակցութիւնների։

Վերջապէս յաղթութիւնը տանում է այս անուանված ժողովրդական կուսակցութիւնը, շնորհիւ այն բանի, որ ունէր իրան զեկավար պ. Ց. Մ-ի նման գործունեայ տաք տեմպերամենտով մի զեկավար, որին օգնում են միւս կողմից Դաշնակցութեան մարմնից գիտակցապէս պոկված մի այլ ոյժ և ժողովրդի մէջ անուն վայելող մի քանի այլ երիտասարդ ոյժեր։ Այս կռիւը, որ սկզբում աւելի անձնաւորութիւնների և անունների շուրջն էր կատարվում, յետոյ կամաց-կամաց ընդունում է որոշ բովանդակութիւն հէնց այն հանգամանքով, որ սկսվում է մի քննադատական վերաբերմունք զեկի Դաշնակցութիւնը և այս վերջինիս գործունէութիւնն ու կազմը։ Թիֆլիսը մի քանի անգամ միջամտում է, ուզարկելով քննիչներ և լիազօրներ, բայց դրանք գործին չեն օգնում, ընդհակառակը դրսի միջամտութիւնը աւելի սրացնում է յարաբերութիւնները տեղի, մինչև վերջապէս Դաշնակցութիւնը տեղիվում է լինում լուծել իր մարմինը։ Ահա այդպէս։

Այդ ժամանակ պայքարը դադարում է այն սուր բնաւորութիւնից, որ նա ունէր, և հրապարակի տէր-տիրականը դառնում է ժողովրդական կուսակցութիւնը՝ անցած լաւ դիրքերը, բաղկացած մի քանի հարիւր անդամներից։

Ահա այս վերջինի մասին է, որ աւելորդ չեմ համարում մի քանի խօսք ասել։

Իմ Ախալցխա եղած երեք օրում, ում հետ և պատանցի, բոլորի խօսք ու զրոյցը Ախալցխայի այդ կռիւն էր։ Հետաքրքիրը այն էր, որ կուսակցութեան անդամներից իւրաքանչիւրը մեղադրում էր հակառակորդին յեղափոխական գործին դաւաճանելու մէջ։ Իմ անկեղծ կարծիքով երկուսին էլ մեղադրանքները ճիշտ են, ճիշտ են հէնց նրանով, որ այն ինչ տեղական դաշնակցականների մէջ խօսք անգամ չէր կարող լինել մի որևէ յեղափոխականութեան մասին, որովհետև տարրերը խիստ տարբեր էին թէ իրանց դիրքով, թէ պարապմունքով և թէ հասկացողութիւնների և յանձնայն դէպս աւելի աջ էին քան իրանց էութեան, միւս կողմը, որի անդամների մեծամասնութիւնը բաղկացած է արհեստաւորներից և մանր վաճառականներից ու դրանց աշակերտներից—դեռ ևս շատ անզգէտ է, շատ անգիտակից, սակայն որպէս նեթ պրօֆէսիոնալ-արհեստակցական միութիւններ կազմելու, մի շատ նպաստաւոր տարր է ներկայացնում իրանից։ Եւ որպէս այդպիսին, նա, արհեստաւորութիւնը, մեծ դեր ունի կատարելու ապագայում, եթէ միայն դրանց զեկավարները աշխատեն խելացի և նպատակայարմար կերպով կազմակերպել։ Բացի դրանից Ախալցխան որպէս մանր առևտրի և բազմաթիւ ու բազմատեսակ արհեստաւորներից բաղկացած քաղաք, երբ կազմակերվի, կարող է իր ձեռքն առնել քաղաքային ինքնավարութիւնը և դեմոկրատացնել ամեն տեսակի քաղաքային հիմնարկութիւններ, սկսած զգրոցներից մինչև քաղաքային կօօպերացիան, բանկը, ակցիզացը, ժողովարանները և այլն և այլն։ Իսկ գալով բուն յեղափոխութեանը, այդ խօսքի ժամանակները մտքով, մենք կասկածում ենք դրա մէջ, ուշի առաջ ունենալով տեղական կեանքում կապիտալի յեղափոխականացնող ոյժի բացակայութիւնը։

Մի տեղ, ուր չը կայ գործարանական կեանք, ուր և չը կայ հետևապէս պրօլետարիատ բանւորութիւն, մի քաղաք, ուր արհեստաւորները մեծամասնութիւն են կազմում և բոլորն էլ աւելի կամ նուազ չափով ապահովված են, այնտեղ քաղաքական յեղափոխութիւնը չունի զարգացման հող, այլ նա կազմակերպվելով կը հասնէ միմիայն մի բանի, որ զարգացնէ իր արատութիւնները, շուտկայ կը հասնէ նրան փոքր չափով և աւելի ձեռնտու պայմանների տակ կը դնէ իր աշխատանքը, այնքան, մինչև ներս կը մտնէ խոշոր կապիտալը, տեխնիկական կատարելագործութիւնները մեքենաները և դրանց մանր արհեստաւորութիւնը կամաց-կամաց կը կլանէ, իսկ արհեստաւորներին կը դարձնէ բանւորներ։ Ահա այդ բաղէից և կը սկսվի դասակարգային գիտակից կռիւը՝ օտիլական յեղափոխութեան իսկական ոգին։

Ահա Ախալցխայի հասարակական ներքին կեանքի մօտիկ անցեալը, նրա ներկան և ապագան, այնքան, որքան ինձ հնարաւոր եղաւ երեք-չորս օրում ծանօթանալ, խօսելով երկու կողմերի հետ։

Գալով քաղաքի կրթական կեանքին, պէտք է ասեմ, որ շնորհիւ ս. Փրկիչ եկեղեցու Ախալցխայի գաւառում ունեցած մի քանի գիւղերի, իսկ քաղաքում կրօնական երկու զգրոցները ունեն տարեկան 20—25 հազար բուրլի եկամուտ։ Դպրոցական շէնքերը յարմար են և մօտ 6—700 աշակերտ-աշակերտուհիներ, ի հարկէ քաղաքի ազգատ դասակարգից, դրացում ստանում են գրեթէ ձրի ուսում։

Այս տարի շնորհիւ քաղաքական խառ գրութեան, իսկ միւս կողմից դպրոցում տիրող ներքին խռովութիւնների, դասերը գնացել են խիստ անկանոն։ եղել է միմիայն 3 ամիս դասաւանութիւն, սակայն ծախսվել է մօտ 20,000 բուբլու չափ մի խոշոր գումար։ Դպրոցների հոգաբարձութիւնը՝ հրատարվել է պաշտօնապարութիւնից, նոր ընտրութիւններ չը կային, իսկ տեսչական-ուսուցչական հարցը, որպէս գամոկլեան սուր կախված է մինչև այսօր ժողովրդի գլխին։

Նպատակ ունենալով ընթերցողներին ծանօթացնել այս շրջանի ներքին կեանքի հոսանքների ու տրամաբանութեան հետ, ես կանգ չեմ առնում այլ հարցերի վրա։

Ուզիզ երեք օրից թողեցի Ախալցխան, հանելով հետս նրա ներկայի վերաբերմամբ բաւականին ծանր տպաւորութիւն։

(Կը շարունակվի)

Ի. Ս. ԱՆԱՆՈՎԻ ԿՏԱԿԸ

Ամբողջ Ռուսաստանում չը կայ մի հայոց ուսումնարան, որ հնարաւորութիւն ունենար գտնում օրիորդաց միջնակարգ դիմաղիա, Թիֆլիսի Մարիամեան-Յովնանեան ուսումնարանից բացի, որ սակայն իր ծրագրով և կազմով դեռ շատ հեռու է միջնակարգ լինելուց։

Այդ ուսումնարանը ամբողջ իր գոյութեամբ պարտական է յայտնի միլիոնատէր Յովհաննէս Սոսիփանեան Յովնանեանի (Անանովի) նուիրաբերութեան։

1876 թւականի յուլիսի 15-ին, ուրեմն երեսուն տարի առաջ, Իվան Սոսիփանիչ Անանովը դիմում է Գէորգ Կաթողիկոսին մի գրութեամբ, որի մէջ յայտնում է, որ իր հանգուցեալ ամուսին Մարիա Իսանովնայի կտակած կամքն է եղել իր յիշատակին հիմնել՝ հայ-լուսաւորչական օրիորդների, գլխաւորապէս որբերի և չքաւոր ծնողների զաւակների համար, մի ուսումնարան Թիֆլիսում, Կուսակցապետը՝ ծանօթանալով նրա գրութեան հետ, նրան գրում է հետևեալ նամակը։

«Զանգ» լրագրի № 3-ում տպված է մի թղթակցութիւն Թարմանարա գիւղից։

Թղթակիցը, ծանօթանալով «Ց. կ.» տառերի տակ, շարել է դիտաւորեալ զրպարտութիւններ և տեր իմ նախագահութեան մասին, որը եղել է ամսոյ 6-ին Քարվանսարայում կայացած պատուիրակների ժողովում։

Ա.—Պ. Ց. Կ. մեղադրում է ինձ, որ ես զանցառութեան տուի ժողովում յայտնած բողոքը բացակայ պատուիրակների առիթով։ Այդ հիմնովին զրպարտութիւն է։

Երբ պարզվեց, որ պատուիրակների մի մասը բացակայ է, հանդիսատես հասարակութիւնից մէկը, Սև-Քար գիւղի տանուտէրը, յայտնեց, որ իր շրջանի պատուիրակները չեն ստացել հրաւէր ու ժողովի մասին տեղեկութիւն չունեն, և որ ինքը եկել է խնդրելու, որ ժողովը յետաձգվի։

Պատուիրակների կողմից ես եղան ձայներ յետաձգելու համար։ Գործակալ քահանայ տէր-Զաքար Ապրեսեանցը բացատրեց, որ նա հրաւէրը ուղարկել է ամեն տեղ և միաժամանակ ծիսաւէր քահանաների միջոցով 5—6 օր առաջ ժողովից։

Սև-Քարի տանուտիրոջ յայտարարութիւնը տարօրինակ թաց, որովհետև շատ հեռու գիւղերից եկել էին պատուիրակներ, իսկ Սև Քարի շրջանից, որը աւելի մօտ է Քարվանսարից, չէին եկել պատուիրակներ։ Յամենայն դէպս, ես դիմեցի պատուիրակներին և բացատրեցի, որ այսպիսի ժողովում շատ ցանկալի է բոլորի ներկայութիւնը, որ եթէ ներկայ եղող պատուիրակները ցանկանան յետաձգել, պատրաստ եմ. միայն ես, իբր նախագահ, իմ իշխանութեամբ իրաւունք չունեմ յետաձգելու, քանի որ ներկայ եղողների թիւը բաւական է նիստը կանօնաւոր համարելու համար։

Հարցը ենթարկվեց քուէարկութեան և 12 պատուիրակներից (ես ձեռնպահ մնացի) 8-ը ձայն տուին շարունակել նիստը, իսկ 4-ը յետաձգել։

Ես պարտաւոր էի շարունակել նիստը և շարունակեցի։ Այս բոլորը արձանագրած է, ըստ արդարի են բոլոր պատուիրակները, և արձանագրութիւնը գտնվում է ս. Աւետարանի մէջ։

Բ.—Յօդուածագիր Ց. Կ. մեղադրում է ինձ, որ ես ուշադրութիւն չդարձրի ես մի բողոքի վրա, այն է, որ պատուիրակներից մէկը յայտնել է, որ ներկայացած համախօսականների մէջ կան այնպիսիները, որոնց ստորագրութիւնները միաժամանակ չեն կատարած, հետևապէս կարող են տարի տալ կրկին, ինչպէս եղաւ Քարվանսարայի վերաբերմամբ, բեկանելու։

Երկին յետաշրջումն հնարաւորութեան։ Արդարև, պատուիրակներից մէկը մի համախօսականի մասին յարուցեց յետկալ հարցը և ցանկացաւ պարզաբանութիւն։ Ես անուշադիր չը թողեցի, այլ բացատրեցի, որ համախօսականները կանօնաւոր կերպով վաւերացած են և որովհետև չկայ բողոք ոչ մի հասարակութեան կողմից, ուստի ոչ մի հիմք չկայ, որ այս ժողովում համախօսականներից որ և իցէ մէկը համարվի անկանոն և ընտրած պատուիրակը զրկվի մասնակցելուց ժողովում։

Այս իմ բացատրութիւնից յետոյ, այլ ես ոչ մի հակառակ խօսք չեկաւ, որից պէտք էր եզրակացնել, որ ժողովականները համաձայն են իմ տուած բացատրութեան հետ։

Գ.—Կատարեալ սուտ է, որ իբր ես քուէարկութիւնից առաջ դիմել եմ ժողովականներին մի ճառով և հորդորել, որ պիտի ընտրեն պատգամաւոր տեղացիներից, և ներշնչել եմ, որ ինձ ընտրեն։ Այստեղ ճշմարտութեան ոչ մի նշոյլ չը կայ։ Ուզիզ է, ես դիմել եմ ժողովականներին մի քանի խօսքով, բայց ասել եմ ընտրողին հակառակը, քան այն, ինչ վերագրում է ինձ Ց. Կ.։

Ես բացատրել եմ պատուիրակներին, որ նրանք կատարեն իրանց հասարակական պարտականութիւնը, զգալով իրանց միանգամայն ազատ, անկախ, և իմանան որ պատասխանատու են թէ իրանց խղճի և թէ հասարակութեան առաջ։ պարզել եմ, որ պատգամաւոր կարող են ընտրել ոչ թէ միայն ներկայ եղող կամ բացակայ պատուիրակներից, այլ և այլ-զաւակներից, միայն արժանաւոր անձնաւորութիւն լինի։

Այս խօսքերիս վկայ են բոլոր պատուիրակները և ներկայ եղող հասարակութիւնը։

Ասացէք ինչպէս, պ. Ց. Կ., արդեօք կայ նմանութիւն իմ ասածի ու ձեր գրածի մէջ և գոնէ չէք ամաչում, որ թոյլ էք տուել ձեզ թիւրիմացութեան մէջ գցել խմբագրատուն մրոտել ձեր ատյօղ գրչով նորաձիլ «Զանգ» լրագրի էջերը, Դիմակաւոր թղթակից Ց. Կ. այս բոլորը բաւական չէ համարել, նա յանդգնում է աւելի կեղտոտ զրպարտութիւններ անել, ասելով, թէ իբր Էդիլեան քահանան և ուրիշ իմ ազգականները պատում էին ժողովրդի մէջ և տարածում (կարծես ժողովրդի համար ես նոր մարդ եմ), որ ես գիւղացիների համար բերել եմ 1240 ռ.։ Թէ ինչ փոյ է այդ, պ. Ց. Կ. լաւ գիտէ, բայց դիտմամբ լռութեամբ է անցնում։ Ընթերցողը եթէ ինձ չը ճանաչէ և հարկէ, կարող է այն տպաւորութիւնը ստանալ, որ ես տարել եմ գիւղացիների համար կաշառք։ Այստեղ արդէն պ. Ց. Կ. հասնում է լրբութեան գագաթնակէտին։

Իրողութիւնը այս է. Պետերբուրգից ես ստացել էի տիկ. Բ.-ի միջոցով նուէրներ 200 ռ և Մարկովից տիկ. Դ.-ի միջոցով կրկին ժողված նուէրներ 40 ռ. հայ-թուրքական ընդհանրութիւնի ժամանակ միասնների օգնին։

Բացի այս, Թիֆլիսից գաղութներից այս տարի ժողովված էր մօտ 2000 ռ., որից համարեա կէսը փոխարինարար տրված է Լեվիցկու ժամանակ միասնների համար հայ գիւղացիների կողմից, իսկ միւս մասը—1000 ռ. մանաժողովը, որի նախագահը ես եմ, որոշից յանձնել ինձ և պ. Ց. Յովհաննեսեանին, որ մենք կարգադրենք այդ գումարով սերմացու գնել կարկուտից վնասված գիւղերի համար Ղազախի գաւառում։

Լաւ իմանալով, որ գրսեցի մի քանի պարոններ, որոնք ժամանակաւորապէս բոյն էին դրել Ղազախում և ընտրողական գործում իրանցից մէկի համար մեծ հոսանք էին գործ դնում, կարող են չաք մեկնութիւն տալ յիշեալ գումարների գործադրութեան, ես այդ մասին հարց յարուցի, երբ ընտրութեան գործը վերջացաւ։ Ժողովականների համաձայնութեամբ որոշվեց 240 ռ. բաժանել այն ընտանիքների մէջ, որոնց աշխատանքները վերնասվել են հայ-թուրքական կռիւների ժամանակ, իսկ 1000 ռ. մասին որոշվեց այդ գումարով գնած սերմացուն ամբարել երկու գիւղերում—Ուզունթալայից և Աչա-Ձոր, իբր յարմար գիւղեր, օրաեկից կարելի կը լինի սեպահմերներին բաժանել կարիք ունեցողներին։

Ի դէպս պէտք է ասել, որ կարկուտից վնասված 15-16 գիւղերից պատուիրակներ կային միայն մէկ գիւղից — Ուզունթալայից։ Այդ գիւղերի մեծ մասը մահմեդական է։ Եւ գուցէ, պ. Ց. Կ., առանց կարմրելու, այս մաքուր գործը ևս կանցնես պղծել և ասիր տալ ընթերցողին ընդունել կաշառքի տեղ։

Կարելի է «զարմանք» լինել ընտրութիւնների առիթով, բայց այնուամենայնիւ չը պէտք է մոռանալ բարեխղճութիւնը և ամօթը։

Բաւական է. զրպարտիչները անարժան են պատասխանի։

Իսկ եթէ ես հարկաւոր համարեցի գրել այս նամակը, գրեցի ոչ թէ իբր պատասխան Ց. Կ.-ին, որի պատասխանը իմ խորին աղ համարանքն է, այլ ընթերցող հասարակ ազգի համար, որպէսզի մթութիւնի մէջ գործող զանազան Ց. Կ.-ները չը մոլորեցնեն հասարակութիւնը։

Սամսոն Յարութիւնեան

Ամսոյս 18-ի գիշերը, մոտելով սենեակս, տարել են բոլոր ունեցած-չունեցածս մինչև վերջին շապիկս, արժողութեամբ 720 ռուբլուն։ Ինձ կասկածելի մարդկանց ես յանձնեցի ոստիկանութեան։ Երբ ես վերադարձայ առաջնորդարան, երկու զաշնակցական զինուորներ եկան ինձ մօտ և սոխալում էին ինձ ազատ լ բանտարկվածին, հակառակ դէպքում ապտնում էին ամեն բան անել, մինչև անգամ սպանել։ Բանվածներից մինը Մխիթար վարդապետի և ծառաներիս մօտ վարուց յայտնել էր որ սենեակս պիտի կողոպտեն, «մարդ քանիր, որ վերջը իմ վրա չը ձգես»։ Այլ ես կասկածելու բան կայ։

Տէրիմ վարդապետ

Թիֆլիս, օգոստոսի 21-ին

Շատերը ինձ դիմում են հարցով. արդեօք ես ստացել եմ Շուշու թեմական զրպարտոցի հոգաբարձութեան կողմից որևէ առաջարկ։ Պարտավ յայտնում եմ, որ ես ոչ հեռագրով, ոչ նամակով և ոչ բերանացի ոչ մի առաջարկութիւն չեմ ստացել։

Լեոն Մարգսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասի Փոխարքայի կարգադրութեամբ անորոշ ժամանակով, անցեալ տարի աշակերտների գործադուլի պատճառով, փակվել է Թիֆլիսի երկաթուղային տեխնիքական դպրոցը։

—

Ինչպէս մեզ յայտնում են, Կովկասի ոստիկանութեան կառավարչի և նրա դիւանատան տեսչի պաշտօնները վերացվում են։ Լուրերին այած, երկրի քաղաքական գործերը զեկավարելու համար մի առանձին նոր պաշտօն է հաստատվելու, որի թեկնածու համարվում է գնդ. Բարոշկինը, որը ենթարկվելու է Փոխարքայի քաղաքական մասի օգնականին։

—

Իշխանուհի Ելիզ. Զամբակուր-Օրբելիանին թոյլատրութիւն է տացել հրատարակելու Թիֆլիսում վրացերէն լեզուով մի ամենօրեայ լրագիր «Автономная Грузія» (Աւտոնոմ Վրաստան) անունով, շաբաթական յաւելուածներով։ վրացերէն և ռուսերէն լեզուներով։ Խմբագիր է հրաւիրված երդ.-հաւատար. Դ. Բ. Գվազաւա։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի ոստիկանապետ գնդ. Մարտինովը մօտ օրերս դուրս է գալու հիւանդանոցից և մեկնելու է Պետերբուրգ, ուր նա լաւագոյն բուժարաններից մէկում մտադիր է աւարտել իր բժշկվելը։

—

Թիֆլիս է ժամանել Պետական Դումայի նախկին անդամ (Թիֆլիս քաղաքի կողմից) Նոյ Ժորդանիա։

—

Ասկիար Զաղէ-խանը միջնորդութիւն է յարուցել Թոյլատրելու տպարան բանալու Դանձակում և հրատարակելու թուրքերէն լրագրով մի լրագիր «Վաթան» (Հայրենիք) անունով։

—

Օգոստոսի 17-ին, հինգշաբթի օրը, Բաքուում դնված յարձակում է տեղի ունեցել «Շելիսլօ» առևտրական և նաւթարդիւնաբերական ընկերութեան քաղաքային գրասենեակի վրա։ Ինչպէս հաղորդում են Բաքուի լրագիրները, այդ յարձակումը կատարվել է հեռատեսակ հանգամանքներում. առաւօտեան ժամը 10-ին ընկերութեան գրասենեակն են մտնում (Գօրչակօվսկայա փող.) բրաուինգներով և բերուդներով զինված 6 հոգի։ Դուռը։ Դրելով բոլոր ելքերը, նրանք «տեղից չը շարժվել» խօսքերով մօտենում են գանձարանին և գանձապահից պահանջում են բանալիները։ Դրամատարը տալիս է բանալին, որով կողպված է եղել գանձապահարանը, որի մէջ եղել է ընդամենը 69 բուբլի, որ և տարել են եկեղեցիները։ Անչայանների ասելով, այդ փողերը վերցված են զէնք գնելու համար։

—

Կովկասեան բոլոր կուսակցութիւնները (վերաց. Հայոց և մահմեդական ազգանվանութեան) «Ока» լրագրի ասելով, պատրաստութիւններ են տեսնում մասնակցելու նոր Պետական Դումայի ընտրութիւններին։ Սօցիալ-ֆեդերալիստները, որ առաջին Դումայի ընտրութիւնների ժամանակ բոյկոտ էին յայտարարել և մասնակցեցին ընտրութիւնների վերջին օրերում միայն, խոստանալիս իրաց անցեալ տաքարիայի ամբողջ սխալն, և արդէն պատրաստվում են իրանց թեկնածուներին ուղարկելու ապագայ Դումա։ Կովկասում ապագայ ընտրութիւնները շատ հետաքրքրական են լինելու, որովհետև հաւանական է, որ այլոյեղ ազգանվանութեան տարրերը իրար հետ կը միանան։ Վերջին հանգամանքը շատ նշանաւոր է, գլխաւորապէս սօցիալ-դեմոկրատների համար, որոնք յոյս ունեն ապագայ ընտրութիւնների ժամանակ էլ Դումա ուղարկելու իրանց թեկնածուների մեծ մասը։ Ինչպէս նկատվում է կովկասեան սօցիալ-դեմոկրատական մամուլից, այժմ սօցիալ-դեմոկրատները պատգամաւորների ընտրութեան ժամանակ աւելի լուրջ կը վերաբերվեն, որովհետև նրանք իրանց նախկին պատգամաւորների համար հեռաթափված են և դժգոհ նրանց գործունէութիւնից։ Կովկասեան ազգանվանութիւնը և նրա կուսակցութիւնները սօցիալ-բարքական ներկայ ծանր, տարաշարոյց վիճակից ազատվելու համար միակ ելք են տեսնում՝ որքան կարելի է շուտով հրաւիրել Պետական Դուման։

—

Սամարայով գլխաւոր մինիստր Պ. Ա. Ստոլիպինի կեանքի դէմ կատարված արիւնահեղ մահափորձի լուրը, Պ. Ն. Դուբրովսկի անմիջապէս թոցել է Շվեյցարիան, և, լուրերին նայած, մեկնել է Անգլիա։ («Բեչ»)

—

Գեներալ Տրեպովի առողջութիւնը վերջին ժամանակներս դէպի կերպով վատացել է։ Ապտեկարսկի կղզու վրա կատարված մահափորձը և գեներալ Մինի սպանութիւնը գենեռալ Տրեպովի վրա քամիների ազատութիւն են գործել։ («Р. Сл.»)

—

«Հէյաթը» հաղորդում է, որ Բաքուում բնակվող մօտ 40,000 պարսկահպատակներ հեռագրով դիմել են Շահի սարդարամին և խնդրել՝ չը հեռացնել տեղական հիւպատոսին։

—

«Обнов.» լրագրին հաղորդում են, որ Անդրբկովկասի երկաթուղու ժամանակաւոր կառավարիչ Նեկրեսաւերը ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան կողմից գործով հրաւիրված է։ Նրա պաշտօնը յանձնվում է ճանապարհների հաղորդակցութեան ինժ. Զուբարովին։

—

«Դարձեալ Մար.-Յովհաննեան օր. ուսումնարանի մասին» յօդուածում, որ տպվից երեկվայ «Մշակի» համարում (№ 181), սպրտել է հետևեալ խորը վրիպակը. «Բնական է, որ կարդալով» (յօդուածի վերջից 12 տող վերև) խօսքերի տեղ պէտք է լիներ «Միխիթարեան էր»։

—

«Страна» լրագիրը տացել է մի նամակ, որը տպագրել է անփոփոխ կերպով։ Նրա բովանդակութիւնը հետևեալն է. «Մահ մահվան փոխարէն» գաղտնի ընկերութիւնը որոշել է Ապտեկարսկի կղզու վրա կատարված մահափորձը և գենեռալ Մինի սպանութիւնը գենեռալ Տրեպովի վրա քամիների ազատութիւն են գործել։ («Р. Сл.»)

—

«Հէյաթը» հաղորդում է, որ Բաքուում բնակվող մօտ 40,000 պարսկահպատակներ հեռագրով դիմել են Շահի սարդարամին և խնդրել՝ չը հեռացնել տեղական հիւպատոսին։

—

«Обнов.» լրագրին հաղորդում են, որ Անդրբկովկասի երկաթուղու ժամանակաւոր կառավարիչ Նեկրեսաւերը ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան կողմից գործով հրաւիրված է։ Նրա պաշտօնը յանձնվում է ճանապարհների հաղորդակցութեան ինժ. Զուբարովին։

—

«Դարձեալ Մար.-Յովհաննեան օր. ուսումնարանի մասին» յօդուածում, որ տպվից երեկվայ «Մշակի» համարում (№ 181), սպրտել է հետևեալ խորը վրիպակը. «Բնական է, որ կարդալով» (յօդուածի վերջից 12 տող վերև) խօսքերի տեղ պէտք է լիներ «Միխիթարեան էր»։

—

«Страна» լրագիրը տացել է մի նամակ, որը տպագրել է անփոփոխ կերպով։ Նրա բովանդակութիւնը հետևեալն է. «Մահ մահվան փոխարէն» գաղտնի ընկերութիւնը որոշել է Ապտեկարսկի կղզու վրա կատարված մահափորձի

«ամանաթելիներ» էլ կան) 150 ռուբլի ռոճիկ է, ահա թէ ինչու.. Պարսկահայը, մանաւանդ գիւղացին ուսուցչի ռոճիկը աւելորդ, ձրի է համարում. այդ տեսակէտով էլ նա խեղճ վարժապետին ամեն բան թանգ գնով է ծախում, չէ տալիս ոչինչ, թէկ պարտաւոր է տալ իր բերքերից, տուածն էլ կրկնակի գնով է տալիս... Վատ չի լինի մի քիչ աւելի կանգ առնել այս հասկացողութեան վրա և տալ օրինակներ անձնական տեսարաններից: Բաւական չէ, որ գիւղերում նրանք այդպէս են վարվում, պահանջում են, որ ուրիշ տեղերում, ամեն մարդ էլ այդպէս վարվի. օրինակ՝ նրանք պահանջում են, որ վճառակատը իրանցից անպայման աւելի քիչ փող վերցնի նոյն ապրանքից, քան որ վերցրել է վարժապետից. և այդ իր համոզմունքը նա առանց քաշվելու յայտնում է ամեն տեղ: Նա կարծում է, որ ինքը մեծ բարութիւն է անում իր տային գրագոց ուղարկելով, որովհետև դրա շնորհիւ ուսուցիչը ռոճիկ է ստանում, և այդ ամեն բաւէ նա պատրաստ է ուսուցչի երեսին շպրտելու:

Ահա այս է գիւղական ուսուցչի դրութիւնը. շատ քան սպասել չէ կարելի այս ձևի գործունէութիւնից և՛ քաղաքներում և՛ գիւղերում: Շատ բնական է, որ ուսուցիչների. կանոնաւոր ուսուցիչների փախուստը միշտ արագացի է, ինչպէս ընթերցողը կը տեսնի այս մի քանի տողից:

Երբէք չէ պատահել մի գրագոց, որտեղ մի ուսուցիչ միայնակ 3—4 տարի պաշտօնավարէր. չենք ասում աշակերտական մի սերունդ արտադրէր: Երբ քիչ շատ կանոնաւոր համարված գրագոց այսպէս է, օրինակ Թաւրիզի երկու միջնակարգ գրագոցները, էլ խօսք չէ կարող լինել գիւղական գրագոցների մասին:

Այս անմիջապէս երևոյթի պատճառը պէտք է որոնել ոչ թէ նիւթական անկարողութեան մէջ, այլ ուղղակի ժողովրդի հակացողութեան, որը միշտ էլ շատ և աւելորդ է համարում կրթութեան համար տուած փողը, թէկ ուրիշ բաների համար (երբեմն գուցէ ակամայ) հարիւրներով է տալիս: Ուրմիայի գիւղերում մեզ պատահել է տեսնել տեղի համմատութեամբ բաւական խոշոր հարուստ մարդու, որը զլացել է մի կօպէկ տալ իր որդուն մատիտ առնելու համար: Նա ոչ թէ ժլատ է, այլ չէ սովորել տալ. դեռ չէ հասցել ուսման կարևորութիւնը և աւելորդ է համարում իր տուած կօպէկը:

Ի՞նչ պէտք է լինի ապագայ ուսումնական տարում Ատրպատական հայ գրագոցների դրութիւնը: Շատ դժուար չէ պատասխանել: Կարևոր ոյժերը հեռացած-փախած, ասպարէզը մնացած երկրորդական և կասկածելի ոյժերի: Օտարական ուսուցիչը երբէք չէ կարող, թէկուզ Թաւրիզում, մի քանի տարվայ հաստատութիւն ունենալ: Տեղացիները, թէ հեմարանական և թէ թեմական կրթութեամբ կան բաւական թուով, բայց դրանք ներկայումս աչքները մնկել են կովկասեայ գրագոցների վրա և հազիւ թէ հայրենիքում ծառայեն, թէև երկու անգամ աւելի նպաստաւոր պայմաններ կունենան քան օտարականները: Ուրեմն մնում է աչքդ բաց տալ «մաշված»-ներին, ասպարէզից քշվածներին:

Մինչև այս ամսի սկզբները Ատրպատականի քաղաքների և գիւղերի դպրոցներից միայն 1—2-ը կազմել էին իրանց խումբը. այս ուշ չէ կովկասի համար, իսկ Պարսկաստանի համար շատ ուշ, որովհետև այսպիսի դէպքերում նրանց դպրոցները հազիւ հոկտեմբերին կը սկսեն կանոնաւորվել: Մինչև դեկտեմբերը նրանք կովկասից ուսուցիչ են սպասում. ամեն տարի Թաւրիզի դպրոցները կարգաստանների են գլուխ պահում—անձար մնացած դէպքում հազար ու մի միտնթով այս ու այն մարդուն են (որ արդէն կողմակի պարապմունք ունի) խնդրում մի քանի դասեր վերցնել: Կարելի է յիշել և ուրիշ անյարմարութիւններ:

Այսքանը առ հասարակ պարսկահայ դպրոցների պայմանների մասին. պէտք է ի նըկատի ունենալ, որ այս դպրոցներից մեծ մասը—գիւղական դպրոցներից՝ պահվում են կողմնակի դրամական օժանդակութիւններով, այնպէս որ դպրոցների վիճակը էլ աւելի վատ կը լինէր քան մեր համառօտակի նկարագրածը:

«Մշակի» ընթերցողներին աւելի լաւ ծանօթացնելու համար այդ կողմերի դպրոցական գործերի և հայերի մտաւոր մակարդակի հետ՝ պէտք է խօսել և օտար միսիօնարների բաւական մեծ գործունէութեան մասին. թէև դրանք այժմ չը կարողանալով դիմանալ մրցումի՝ մեր ազգային դպրոցների հետ՝ հետզհետէ սահմանափակում են իրանց գործունէութիւնը կրթական ասպարէզում:

Գալուստ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՒՐՔԻԱ

Ալբանական շարժումներ.—Վիեննայից, օգոստոսի 9-ին, հեռագրում են, որ ալբանացի ապստամբները օգոստ. 6-ից սկսած պաշարել են Միտրովիցա քաղաքը: Օսմանեան կառավարութիւնը երեք գունդ զօրք և երկու լեռնային թնդանօթ է ուղարկել քաղաքն ազատելու համար ապստամբների ձեռքից: Շէմսի փաշան, որ այդ զօրքերի գլուխն էր անցել, պարտութիւն է կրել և թիւրքական զօրքերը կատարելապէս ջարդվել են: Պրիզրէնից, Պրիշտինայից և Սքիւբից զօրքեր են գնացել Շէմսի փաշային օգնելու: Բոլոր նշաններից երևում է, որ ալբանական ապստամբական շարժումը պիտի ընդհանրանայ և մեծ չափեր ընդունէ:

Սուլթանի ճիւանդութեան առիթով.—Օսմանեան գահի շուրջը պալատական խնդիրները են սկսել երևան գալ: Այսպէս 1) գինուորական կուսակցութիւնը մտադիր է և ծրագրում է Բոլգարիայի դէմ պատերազմ սկսել, եթէ իր ինքնակոչ տէրը, որ սուլթանի եղբայրը Մուհամմէդ Ռիշադն է, կարողանայ գահն ինքը գրաւել: Այդ կուսակցութիւնն արդէն այժմեանից հրամաններ է տուել Մուստաֆա փաշային, որպէս զի սոյն վերջինս Կըրկ-Քիլիսէի, Սարիսուլպօլսի և Սէրէզի մէջ ռազմական ոյժեր կենտրոնացնէ, որոնք սուլթան Աբդիւլ-Համիդի մահից անմիջապէս յետոյ հրաման պիտի ստանան Բոլգարիա խուժելու: Եւ այդպիսով պիտի յայտարարվի գահաժառանգ Մուհամմէդ Ռիշադի գահակալութիւնը: 2) Երկրորդ կուսակցութիւնը շէյխ-իւլ-իսլամի կուսակցութիւնն է, որի թեկնածուն է Եուսուֆ Իզզէդդինը, որը սուլթան Աբդիւլ-Ազիզի որդին է: 3) Գահի երրորդ թեկնածուն է սուլթան-Համիդի սիրելի որդի Բիւրհանէդդինը, որը սակայն Մուհամմէդ Սէլիմից (սուլթան Համիդի անդրանիկ որդին) փոքր է: Այսպիսով, ուրեմն, օսմանեան գահը պատկանելու է նրան, ով շահի Ֆեթվան. իսկ Ֆեթվան տալիս են շէյխ-իւլ-իսլամը, մեծ-եպարքոսը, ներքնապետը և զինուորական մինիստրը, որի ձեռքի տակ է գտնվում Կ. Պոլսի զօրաքանակի և նաւատորմիղը: Կարծվում է, թէ «վիճակը» պիտի ընկնի է Մուհամմէդ Ռիֆաթ էֆէնդուն:

Թիւրքեռն սպառնում են եւրոպական հիւպատոսներին.—Բէյրութի եւրոպական շրջաններում վերջերս բաւական իրաքանչիւր էր տիրում շնորհիւ այն բանի, որ թիւրքերի կողմից անատրաքիր նամակներ էին ուղարկվում տեղան եւրոպական հիւպատոսներին՝ սպառնալով նրանց կեանքին, եթէ վերջիններս իրանց ազդեցութիւնը գործ չը դնեն և պաշտօնանկ անել չը տան ներկայ վալի (նահանգապետ) Խալիլ-փաշային, որին թիւրքերն ամբաստանում են կաշառակերութեան և հասարակութիւնը ճընշելուն համար:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Ազատագրական շարժումների մի քանի բնորոշ մանրամասնութիւնների մասին.—Երբ ժողովրդային շարժումները ընդհանուր բնաւորութիւն են ստանում Թէհրանում, կառավարութիւնը, կամենալով թէ մի գուցէ, կարուկ միջոցներ ձեռք առած միջոցին, ժողովուրդը, ըստ պարսկական սովորութեան, օտար դեսպանների մօտ ապաստանէ, խընդրում է այս վերջիններին, որ այդպիսի ապաստարան չը տան ժողովրդին: Անգլիական դեսպանի օգնականը, առարկելով դեսպանի բացակայութիւնը, այդպիսի խոստում չէ տալիս, և ժողովուրդն էլ յիրաւի, հէնց նրա մօտ է ապաստանում: Անգլիական դեսպանատունը ապաստանող ժողովրդի թիւը եղել է մօտ 30—35 հազար հոգի: Դրանից յետոյ, ռուսական դեսպանը սկսում է ամեն տեսակ ջանքեր թափել, որ այդ ապաստանած ժողովուրդի դէթ մի մասը իր մօտ քաշէ, որպէս զի կարողանայ իր ազդեցութիւնն ու պրեստիժը պահպանած լինել: Նա խոստանում է իր մօտ ապաստանողների բոլոր ծախսերը հոգալուց զատ, օրական իւրաքանչիւր մարդու 2 բուբլի էլ նուէր բաժանել, բայց և այնպէս ժողովրդից ոչ ոք չէ համաձայնում ռուսաց դեսպանատուն գնալ: Պարսիկները հեռանալ բնրոյ պատասխանն են տալիս իրանց դրաւիրող ինքնակոչ խնամակալին:

«Ձեր կառավարութիւնը իր հարգատ ժողովրդին չէ խնայում և անվերջ կոտրածների է ենթարկում: Իսկ դուք մեզ էք ուզում պաշպանել: Շնորհակալ ենք, պաշպանեցէք ձեր ժողովրդին»:

Հետաքրքիր են նաև անգլիական դեսպանատունը ապաստանածների օրական ծախսերը: Այդտեղ սպառվել է օրական մօտ 400 պուդ բրինձ, 300 պուդ հաց, 100, պանիր, 600 պուդ սառուց, 100 պուդ շաքար, 2 պուդ թէյ, 250 պուդ միս, չը հաշուելով թութունը, պապիրոսը և այլ մթերքները: Իսկ ապաստանածների համար եղած այս ծախսերից, 55 օրվայ ընթացքում օրական մօտ 1000 բուբլի էլ ցրելիս են եղել աղքատ ժողովրդի ընտանիքներին: Եւ այս բոլորը արել են պարսիկ հարուստ վաճառականները:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳՐԻՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

21 օգոստոսի

Կ. ՊՕԼԻՍ, 20 օգոստոսի: Ցունական ջարդերի առթիվ բօլգարական իշխանին ուղարկած հեռագրին պատրիարքը պատասխան է ստացել, թէ՝ ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ պատրիարքի հեռագիրը՝ իր մէջ կեղծութիւն և զրպարտութիւն է պարունակում, արժանի չէ գտնվում պատասխան ուղարկել: Պատրիարքի պաշտօնական օրգանը հրատարակելով բօլգարական իշխանի պատասխանը, նկատում է, որ բօլգարների ատելութիւնից ու զայրոյթից յետոյ անկարելի էր ուրիշ պատասխան սպասել: Հիւպատոսութիւններից մի քանիսը մի անգամ ևս մատնանշեցին յունական չեռաների (հրոսակախմբերի) վայրագութիւնների և սանձարձակութիւնների վրա:

ՀԷԼՍԻՆԳՖՈՐՍ, 20 օգոստոսի: Օգոստոսի 17-ին Սվէաբորգում զինուորական դատարանը հրացանազարկութեան է ենթարկել 19 զինուորի և 3 քաղաքացու, 12-13 տարով տաժանակիր աշխատանքների՝ 33 զինուորի, 4 տարով՝ 33 զինուորի, պատժիչ բաժանմունքը՝ 195 զինուորի 3-4 տարով, զինուորական բանտարկութեան՝ 298 հոգու 3.4 ամսով, 75 հոգու՝ ուղղիչ բաժանմունքը 20 օրով. պատժից ազատել է 30 հոգու: Այս դատավճիռը հասատութիւն է դռել 22-րդ զօրքանակի հրամանատարից, միայն մահվան պատիժը փոխարինելով մէկ հոգու տաժանակիր աշխատանքների անորոշ ժամանակով, 3 հոգու՝ 20 տարով, 6 հոգու՝ 15 տարով, մնացած զինուորներին և երկու գիւղացիներին 12 տարով:

ՄՕՍԿՎԱ, 20 օգոստոսի: Ռուսիկանական ծառայողների վրա տեղի ունեցած յարձակումների առաջն առնելու համար քաղաքապահները գիշերները չը պէտք է կանգնեն փողոցի մէջ տեղը, այլ անկիւններում, և ոչ թէ մենակ, այդ պահակների հետ:

ՄՕՌՇԱՆՍԿ, 20 օգոստոսի: Իշխանութիւնների հրամանով, զինուորների հարկանն Զէրպասովը, որից կողոպտել էին 16,000 բուբլի, բանտարկված է իրան ուղեկցող ստրաժնիկի հետ միասին:

ՐԻԳԱ, 20 օգոստոսի: Երէկ Լէննէբատէնում սպանված է բողոքական պոբեդոնոսցև: Ցիմմերմանը և իր կինը:

ԲԷՎԷԼ, 20 օգոստոսի. Բէվէլեան դաւառի Ռապպէլի մօտ հրացանի հարուածներով սպանված է տեղական պաստորը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 օգոստոսի: Աչքի առաջ ունենալով Պետերբուրգի փողոցներում կողոպտումների սաստկանալը, քաղաքապետի կարգադրութեամբ օգոստոսի 21-ից հերթապահութիւն կանգնեցին բոլոր ոստիկանական ծառայողները:

Պարզված է, որ Լարիոնովան՝ Մինին սպանելու նպատակով առաջ եկել է Պետերբուրգ, 2 օր մնալով այդտեղ և յետոյ տեղափոխվել է Պետերհոֆ: Նրա անձնաւորութիւնը պարզելու համար Մոսկվայից կանչված են մի քանի գործակալներ: Մահափորձի ժամանակ նրա մօտ գտնված են սա տիպ ոյժի մի ռումբ և ռումբի կաղապարներ

ԲԵՐԴԵԱՆՍԿ, 21 օգոստոսի: Բանտից ազատված է նախկին Պետական Դումայի անդամ Պրիդուլան: Ոչ մի մեղադրանք նրան չէ ներկայացված:

ՏՈՒԼԱ, 21 օգոստոսի: Նահանգական զեմստվային արտակարգ նիստը հեռագրել է մինիստր Մաօլիպինին հետևեալը. «Մորաքոյ յուղված զաղբելի չարագործութիւնից, ժողովը որոշեց ձեզ տաքել իր անկեղծ համակրանքը և յոյս ունի, որ ձեր որդիքը լիովին կապաւինվեն:

Հաւատում ենք, որ ձեր առ հայրենիքն ունեցած անսահման սէրը ձեզ ոյժ կը պարգևէ շարունակել ծառայել Թագաւորին և հայրենիքին—անկեղծ ազատութեան և օրինակատարութեան ճանապարհով»:

Կ. ՊՕԼԻՍ, 21 օգոստոսի: Ցունական շրջաններում Սոֆիայից տեղեկութիւն է ստացված, որ ներքին գործերի մինիստրը, մեծ պատութիւնների ներկայացուցիչների առաջարկութեանը յայտնել է, որ այժմ հանգըստութիւնը ապահովված համարել. սակայն ինքը չէ երաշխաւորում, եթէ յունական հրոսակախմբերը կը շարունակեն իրանց չարագործութիւնները:

22 օգոստոսի

ՍԱՆԴ-ԵԱԳՕ, 21 օգոստոսի: Միացեալ-Նահանգների սնատս-սեկրետար Ռուդը այսօր ժամանեց և իսկոյն այցելեց նախագահին: Իշխանութիւնները պատւում են նրան ճաշկերոյթներով:

ՎԱՇԻՆԳՏՈՒՆ, 21 օգոստոսի: Շարունակվում են զգացվել ստորերկրեայ ցնցումներ:

ՍԼԱՎԵԱՆՍԿ, 21 օգոստոսի: Բանդուշէվո կայարանի մօտ կողոպտված է եկեղեցին, սպանված է 3 պահապաններ, յափշտակված է մեծ քանակութեամբ փող և թանկագին իրեր:

ՐՕԿԱԶԵՎ, 21 օգոստոսի: Գիւղացիների մէջ ագիտացիայ մղելու համար կալանաւորված է հայանքի գրագիրը:

ԼՕՆԴՕՆ, 21 օգոստոսի: «Трибунъ»-ը հաղորդում է Շանխայից, որ չինական սահմանադրութիւնը կը մտցվի փետրվարում 1910 (?): Այժմ որոշված է մի շարք պաշտօնական անձինք ուղարկել՝ եւրոպական և ամերիկական պետութիւնների քաղաքականութիւնը և մեթոդները ուսումնասիրելու համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 օգոստոսի: Հրատարակված է կայսերական հրովարտակը, որը խոստանում է սահմանադրութիւն մտցնել, երբ ժողովուրդը կը հասունանայ: Հրովարտակի մէջ ասված է. «Դիմասպիայի թագաւորութեան սկզբներից խորամիտ կայսրները հրատարակեցին ժամանակի պահանջներին համապատասխան օրէնքներ: Այժմ երբ Զինուսանը յարաբերութեան մէջ մտաւ բոլոր ժողովրդների հետ, չինական օրէնքները և քաղաքական սիստեմը իրանց նշանակութիւնը կորցրին, որով երկրում մշտական խռովութիւններ սկսվեցին. ուստի հարկաւոր ենք գտնում հրատարակել օրէնքների մի նոր գիրք, հանկառակ դէպքում մենք կը լինէինք մեր պապերի և ժողովրդի կասկած կոչման անհամապատասխան և անարժան անձեր: Զինաստանի թուլութեան պատճառը հանդիսանում է այն անտգաղիպիզմը. որ կայ երկրի կառավարիչների և կառավարվողների միջև: Եւ երբ ադմինիստրական և ֆինանսական մասերի վերաբերմամբ նախագծված բարենորոգումները կը վերջանան, ժողովուրդը կը վերակոչվի, այն ժամանակ արդէն կայսրը սահմանադրութիւն կը տայ: Սահմանադրութիւն մտցնելու ժամանակը կախված կը լինի ժողովրդի՝ պետական հարցերը ըմբռնելու և հասկանալու գործում ցոյց տուած աջողութիւնների արագութիւնից:

ԿԱԶԱՆ, 21 օգոստոսի: Սվաժսկի գաւառում անյայտ չարագործները յարձակվել են հարկանի վրա և գողացել են 15,000 բուբլի:

ՍԱՄԱՐԱ, 21 օգոստոսի: (Պաշտ. թղթակ.): Բուգուլուկի գաւառի Ֆէկլէնկի գիւղի բընակիչները քարոզչադ են արել կալուածատէր Ստօպէուսի կալուածքը: Բշելով պահակներին, և փայտերով ու գերանդիներով զինված թւով 60 մարդ տանուտէրի առաջնորդութեամբ գընացին Ստօպէուսի կալուածքը քարոզչանդ անելու դիտաւորութեամբ, բայց առաջնորդ եկած հեծեալ պահակները ցրեցին: Ձերբակալված են 24 հոգի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 օգոստոսի: Սինոդը և ֆինանսների մինիստրութիւնը թոյլատրել են ամենուրեք հանգանակութիւն բանալ անբարեգործութիւնից զրկվածների օգուտին: Առաջինը եկեղեցիներում, իսկ երկրորդը—պետական գինու պահեստներում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 օգոստոսի: Ստեսսելի, Ֆօլի, Ռէյսի և ուրիշների գործը բարձրագոյն հրամանով յանձնվում է նոր հաստատված զինուորա-քրէական բարձր դատարանին: Նախնական քննութիւնը կատարում է զինուորական գլխաւոր դատարանի անդամ Բիկովը, իսկ դատավարային պարտաւորութիւնները յանձնված է Պաւլովին: Քննութիւնից յետոյ ամբողջ գործը դատախազի եզրափակման հետ միասին ներկայացվում է կամ գործը դադարեցնելու կամ թէ առանց դատարանի տուգանքներ վերցնելու համար—եթէ գործը վճռվի միանգամայն, իսկ կարծիքների տարաձայնութեան դէպքում ներկայացվում է բարձրագոյն հաճութեան: Դատարանին յանձնելու դէպքում մեղադրական ակտը մտցնվում է զինուորական քրէական բարձր դատարանը, որի դատավճիռը վերջնական է, բայց յանձնըվում է բարձրագոյն եզրափակման:

ՎԱՐՇԱՎԱ, 21 օգոստոսի: Գիւներալ-նահանգապետի հրամանով զինուորական դրութեան ամբողջ ժամանակամիջոցում դադարեցրած է «Сокодъ» գիմնասիական ընկերութեան գործունէութիւնը: Կիրակի օրը ամբողջ քաղաքում խուլարկութիւն էր. փողոցներում ձերբակալված են անցաթուղթ չունեցող բազմաթիւ անձինք: Խուզարկութիւնների շնորհիւ քաղաքը երեկոյեան ժամը 8-ից մնռնում է, առևտուրը ընկնում է:

ՍԻՄՖԵՐՈՊՕԼ, 21 օգոստոսի: Բացվում է խաղաղ վերածնութեան կուսակցութեան բաժինը: Ոչ հրատարակվի լրագիր:

ԲԵԼՕՍՏՕԿ, 21 օգոստոսի: Երկրի կառավարչի հրամանով կազմված է մի արշաւախումբ: որ հետազօտելու է գաւառի ազագրութիւնը:

ԻՆՏԵՐԼԱԿԷՆ, 21 օգոստ.: Պարզած պէտք է համարել, որ պարիզեցի Միլլերի մարդասպանը ռուս կին է եղել և պատկանելիս է եղել յեղափոխական կազմակերպութեան. կասկած չկայ որ յանցանքը քաղաքական ընոյթ է պարունակում և Միլլերը ընկաւ իբրև օրհասական սխալի մի զոհ:

ԼՕՆԴՕՆ, 21 օգոստոսի: Այսօր կառուցվող սկանանաւի վրա նաֆթի բռնկման պատճառով պայթիւն առաջացաւ. սպանված 4, վիրաւորված 8 հոգի:

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 21 օգոստոսի: Պաշտօնապէս հաղորդվում է որ Բերլինգեան ծովում կանգնած ս. Դէօրպի մենաստանում ձերբակալված են 5 եապօնացիներ ապօրինի կերպով ծովային փոկեր որսալու համար: Մասնաւոր տեղեկութիւնները հաստատում են, որ կղզուց 3 մղոն հեռաւորութեան վրա եապօնական առագաստանաւը խարիսխ նետեց, որից դուրս եկան մարդիկ հետազօտելու շրջակայքը և նկարելու եապօնացիները պողում էին, որ ջուր էին փնտռում:

ՄՕՍԿՎԱ, 21 օգոստոսի: Լոյս օգոստոսի 20-ի գիշերը ձերբակալված է շրջանային սոցիալ-դեմօկրատական կուսակցութեան կոմիտեն, 12 հոգուց բաղկացած, բռնված են բազմաթիւ զօկումենտներ: Բօրսային կոմիտէն ստացել է Սուօլիպինից հետևեալ հեռագիրը. «Մորաքոյ զգացված եմ բօրսայի կոմիտէից ստացված թանկագին շնորհաւորութիւնից: Արտայայտված համակրանքը ցոյց է տալիս, որ շատ մօսկվացիներ համակարծիք են կառավարութեան ցանկութեան հետ տանելու երկիրը դէպի վերակազմութիւն, կայսրի ծրագրա ըէֆօրմները մօտ կը լինեն իրագործման, միայն խիստ կարգապահութիւն հաստատված պայմաններում:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱԶԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԼԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
ԽՄԵՑՕՐ, ԲԱՑՔ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԻՑ
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միկսեռ. հ.
Դ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԴԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՈՆ-ԲԱՅՇԵՎ Ա. Ի. ՇՂԵՐԲԱԿՈՎԱ—2½—3 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
ԵՐԵԿՈՅԵՆՔԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.
Ի. Դ. ԱԲԵԱՆՑ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Հանրաստորագրը (գրանցումը) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նալասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական ժամհակալներով:
Ելիզավէտինսկայա փողոց, 101, տէլէֆոն 1026
Հիւանդները ընդունելութիւն ամեն օր:
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաուլի և սիֆիլիս:
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ականջի, ներքին և նեարդաբուժութիւն:
Գ. Ն. ԴԵՄԻՌՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՅԻԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի:
Գ. Ա. ԲԼՅՇԷՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում միկրոսկոպական, բակտերիոլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և նանատների (кормилица) ընտրողութիւն: Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.: Օպէրացիայի և հանմարդրդի վճարը ըստ համաձայնութեան: Դիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմերներից:
(չ. ու. կ.) 85—100

„Գուտտենբերգ“
գրավաճառանոցում ծախվում են
«Թուրքական խնդիրներ և օրինակներ», ա. մաս, փոխադրութիւն Ար. Սպարապետեան . . . . . 30 կ.
Նոյնը բ. մաս . . . . . 30 կ.
Նոյնը գ. մաս . . . . . 30 կ.
Գուտտարով դնողներին զեղչով
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гутенбергъ».
3—10

ՇՈՒՇՈՒ նոր բացվող երկսեռ Որբանոց-Դպրոցի կազմակերպող յանձնաժողովը հրատարում է վերատեսչուհի բարձրագոյն կրթութեամբ, հմուտ մանկավարժուհի:
Պայմանների համար դիմել՝ Шуша, Е. Багатуровой:
(ա. օ.) 2—6

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլովինսկի պրոսպէկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կադետսկի փողոցից № 2.
(ա. օ.) 215—300

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱԲԵԱՆ
Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ: Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36
(կ.չ.ու.) 42—100

Մակար Տէր-Սարգսեանի
Հայկական գեղագրութիւն . . 30 կ.
Դասագիրք գծագրութեան . . 50 »
Уроки Чистописанія . . . 25 »
100-ից ոչ պակաս գնողներին 20% զեղչ:
Դիմել՝ Թիֆլիս—կենտրոնական գրավաճառանոցին: Երևան՝ յօրինողին: 1—10

Ներսիսեան դպրոցի շրջանաւարտ մի երիտասարդ
Որոնում է ուսուցչական պաշտօն հայոց եկեղեցական-ծխական դպրոցներում համաձայն է նոյնպէս Պարսկաստան գնալու ծանկանում է աւանդել հայոց լեզու, թուաբանութիւն, պատմութիւն, կրօն: Դիմել՝ Կարս, Մարտիրոս Սահակեանին: (չ. ու. կ.) 1—3

ԴՕԿՏ. Կ. ՓԱԶԸՅԵԱՆԻ
«Պատկերազարդ Ընդարձակ Դպրոցական Առողջապահութիւն»
Վաճառվում է մեր եէմէն անունով Տուրբեցկի-կաֆէէին մագազինում, Գօլովինսկի պրոսպէկտ, տուն Անանովի:
ԳԻՆՆ Է 6 ՌՈՒԲԼԻ
ճանապարհածախսով:
Գաւառներից կարող են ուղղակի մեզ դիմել կանխիկ վճարով:
Մեզ մօտ վաճառվում են նաև Դօկտ. Կ. Փաշայեան—Խանի Վիպական հաւաքածուները, իւրաքանչիւրը—10 կոպէկ, ճանապարհածախսով—12 կոպէկ:
1—8 (չ. կ.) Ն. Թաթիկեան

ԱԶՕՎՕ-ԴՈՆԵԱՆ
ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ
յայտնում է ի գիտութիւն իր բաժնետէրերին, որ եթէ տրված շաբաթվայ ընթացքում չը ներկայացնեն իրանց յատուկ հաշուեդուրարներից առնվելիք հանգցնելի դրամը (погашеній), ի նկատի ունենալով իրանց գրաւ դրած տոկոսային արժեթղթերի կուրսի ընկնելը և տոկոսները վճարելու նկատմամբ ժամանակը անցկացնելը, կը վաճառվին Պետերբուրգի բօրսայում—բօրսային միջնորդի միջոցով, բանկի կանոնադրութեան 21-րդ յօդուածի հիման վրա: (չ. ու. չ.) 1—3

ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԽՆԱՄՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
ԿՐՈՒԺՕԿԻ
Ամառային շինութեան մէջ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է
Ուրբաթ, օգոստոսի 25-ին, բարեհաճ մասնակցութեամբ՝ ռուսաց օպերայի դերասանուհի Սամսու-Ալէքսինի, սիմֆոնիական օրկեստրի՝ Շտէյմբերգի դեկավարութեամբ, և պ.պ. Շիֆերբլատի և Երօվկու:
ԿՕՆՑԵՐՏ
Սկիզբն է երեկոյեան ժամը 9-ին:
Տոմսակները ծախվում են Կրուժօկում:
1—1

Օր. Մ. Կարա-Մուրզայի
ԿԱՐ ՈՒ ՉԵՒԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ
Աշակերտուհիների ընդունելութիւնը սկսվում է օգոստոսի 28-ից, իսկ պարապմունքները—սեպտեմբերի 4-ից: Ընդունվում են նոյնպէս գիշերօթիկ աշակերտուհիներ և կանանց ու երեխայոց շորերի պատուէրներ:
Հասցէն՝ Бебутовская ул. № 19, уголъ Вельяминовской ул. (չ. կ. հ.) 1—3

Օրինակելի մի ընտանիքում ցանկանում են
ՆԱԽԼԻԲՆԻԿՆԵՐ
(ուսանողներ)
Կարելի է դասերի կրկնողութեամբ (repetitripoվկա):
Սուդէբնայա փող., տ. № 36. հարցնել կար և ձեի դպրոցում, վերին յարկում:
3—3

Եղեսիայի ծխական դպրոցի համար արդէն վարձված են ուսուցիչներ. պատասխան չը ստացողներն ազատ են:
Ի դիմաց հոգաբարձութեան՝
աւագ ուսուցիչ՝ Պօղոս Պօղոսեանց

ԷՖԵՐԻԿԵԱՆ Հ. Ս.—Պատկերազարդ բնաբխարիկ Բառարան, մեր անցեալին ու ներկային յուշարձանն է. իր մէջ նկարագրված են հայրենի աշխարհի նահանգն ու գաւառ, քաղաքն ու աւան, շէն ու գիւղ, լեռ, դաշտ, գետ, լիճ, վանք, և վերջապէս Բնաբարի ամեն անկիւնն, պատմական յիշատակներով համեմած:
Հրատարակուած է առաջին հատորը, 843 մեծադիր էջ. 350-է աւելի պատկերներով զարդարուած: Գինն է 6 բուբլի: Դիմել հետաքրքիր հասցէին.
Imprimerie Arménienne St. Lazare Venise (Italie) և կամ Книжный магазинъ «Гутенбергъ», Тифлисъ.
Այս բառարանի երկրորդ հատորի յիսունթերթեան առաջին գիրքը լոյս կը տեսնի տարեսյս մէջ և կը զրկուի բաժանորդներու: Երկրորդ հատորի բաժանորդագինը է 6 բուբլի:
2—2

ԵՐԿՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ
Մաթեմատիկոս և պատմաբան
(Լազարեան ճեմարան աւարտած)
Ցանկանում են